2012, ՄԱՐՏ Բ, ԹԻՎ 6 (362)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Ցավակցական գիր Շենուդա Գ Պատրիարքի մահվան առիթով



Մարտի 18-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավակցական գիր է հղել Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Սրբազան Սինոդին, հոգեւորականությանը եւ ղպտի քրիստոնյաներին՝ Ալեքսանդրիայի եւ Համայն Աֆրիկայի Պապ, Ղպտի Ուղղափառ Եկեղեցու Շենուդա Գ Պատրիարքի մահվան կապակցությամբ:



Պատրիարքական տեղապահ Էլ Բեհեյրա Դամանհուրի Պախոմիուս մետրոպոլիտին ուղղված հայրապետական ցավակցագրում ասվում է.

*«Արդարեւ, Ղպտի Ուղղափառ Եկեղեցին, ինչպես նաեւ ողջ քրիստոնյա աշխարհը կորցրեց «քաջ հովվի», ով ավելի քան չորս տասնամյակ խոր եւ անմնացորդ նվիրումով իր հովվապետական առաքելությունն էր իրականացնում Քրիստոսի Սբ Եկեղեցում: Երջանկահիշատակ Շենուդա Գ Պատրիարքը մեծ նախանձախնդրությամբ եւ իմաստությամբ առաջնորդեց Ղպտի Ուղղափառ Եկեղեցին՝ թե՛ դժվարին ու անհանգիստ եւ թե՛ խաղաղ ժամանակներում: Նրա ջանքերի շնորհիվ Ղպտի Եկեղեցին վերածնունդ ապրեց:*

*... Մենք աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ երջանկահիշատակ Պատրիարքի հոգին ընդունի Իր երկնային արքայության մեջ, եւ թող Սուրբ Հոգին մխիթարություն պարգեւի Ղպտի Ուղղափառ Եկեղեցու սպասավորներին ու հավատացյալ հոտին»:*

Մարտի 20-ին Շենուդա Գ Պատրիարքի հուղարկավորության արարողությանը մասնակցեց նաեւ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու պատվիրակությունը, որի կազմում են Ֆրանսիայի հայոց թեմի առաջնորդ Նորվան արք. Զաքարյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Աշոտ եպս Մնացականյանը եւ Ռումինիայի հայոց թեմի առաջնորդ Տաթեւ եպս Հակոբյանը:

Մարտի 21-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, նախագահությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն՝ Ղպտի Եկեղեցու երանաշնորհ հովվապետի հոգու խաղաղության համար:

Ներկա էին Հայաստանում եւ Վրաստանում պապական նվիրակ Մարեկ արք. Սոլչինսկին, Հայաստանում, Վրաստանում եւ Արեւելյան Եվրոպայում Հայ Կաթողիկե Եկեղեցու առաջնորդ Ռաֆայել արք. Մինասյանը, ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Սերգեյ Մանասարյանը, ՀՀ-ում Եգիպտոսի եւ Լիբանանի դեսպանությունների ներկայացուցիչներ:

Արարողությանը Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձավ Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ երջանկահիշատակ Շենուդա Պատրիարքի անձին եւ տասնամյակների բեղուն հովվապետական գործունեությանը:

*Շարունակությունը՝ էջ 2*

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*21 մարտի*

### Պապական նորանշանակ նվիրակին

Մարտի 21-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում եւ Վրաստանում նորանշանակ պապական նվիրակ Նորին Սրբազնություն Մարեկ արք. Սոլչինսկուն:

Զրույցի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը շնորհավորեց Մարեկ սրբազանին նշանակման առիթով՝ հաջողություն մաղթելով իր առաքելության մեջ:



Հանդիպմանն անդրադարձ կատարվեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցու հարաբերություններին, մասնավորապես Մայր Աթոռ Ս. Էջմիածնի եւ Վատիկանի միջեւ ձեւավորված սերտ համագործակցությանը: Վերհիշելով 2001 թ. Հովհաննես Պողոս Բ Պապի այցը Հայաստան՝ Նորին Սրբությունն իր խոսքում ընդգծեց, որ նման փոխադարձ այցելությունները նորոգում եւ ամրապնդում են երկու Եկեղեցիների կապերը: Այդ առումով կարեւորվեցին նաեւ շփումները եւ համագործակցությունը թեմական եւ ծխական մակարդակի վրա:

Հանդիպմանը ներկա էր Մայր Աթոռի Միջեկեղեցական հարաբերությունների գրասենյակի պատասխանատու Հովակիմ եպս Մանուկյանը:

*28 մարտի*

### «Վորլդ Վիժն»-ի ղեկավարության անդամներին

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Վորլդ Վիժն» կազմակերպության՝ Միջին Արեւելքի եւ Արեւմտյան Եվրոպայի տարածաշրջանային ղեկավար Կոննի Լեննեբերգին եւ Տարածաշրջանային գործառնությունների ղեկավար Դերք Բուհին:



Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը բերեց քրիստոնեական կազմակերպությանը՝ եկեղեցիներին ցուցաբերվող զորակցության եւ օգտաշատ ծառայությունների համար եւ անդրադարձավ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի եւ «Վորլդ Վիժն»-ի միջեւ մեկ տասնամյակից ավելի պատմություն ունեցող համագործակցությանը եւ հաջողություններին: Նորին Սրբությունը մասնավոր գոհունակություն հայտնեց, որ Հայ Եկեղեցու տարբեր կառույցների եւ «Վորլդ Վիժն»-ի համատեղ աշխատանքները հատկապես ուղղված են մանուկների քրիստոնեական դաստիարակությանը:

Իսկ «Վորլդ Վիժն»-ի ներկայացուցիչներն ընդգծեցին, որ Հայոց Եկեղեցին կարեւոր գործընկեր է կազմակերպության առաքելության իրականացման գործում: «Վորլդ Վիժն»-ի պատասխանատուները ներկայացրեցին Հայաստան այցի իրենց դրական տպավորությունները, անդրադարձան երիտասարդների համար իրականացվող աշխատանքների կարեւորությանը:

Զրույցի ընթացքում խոսվեց նաեւ երիտասարդության առջեւ ծառացած մարտահրավերների եւ մանուկների կրթության ու դաստիարակության խնդիրների մասին:

# «ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԸՆԹՐԻՔԸ» ԵՎ ՆՐԱ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

## Ա. ԽՈՐՀՈՒՐԴԸ

Տիրոջ հրաշափառ Հարությանը նախորդող շաբաթը, որ Եկեղեցում կոչվում է Ավագ, ամփոփումն է Հիսուս Քրիստոսի երկրային կյանքի վերջին օրերի (որոնք առանձին-առանձին կրկին Ավագ են կոչվում) ուսուցումների ու պատվիրանների, չարչարանքների ու նվաստացումների, խաչի վրա մահն ընդունելու եւ հարություն առնելու բազմաբովանդակ խորհրդի:

Օրերի այս շարքում, իր աննախադեպ իրադարձությունների առումով, առանձնակի տեղ ունի Ավագ հինգշաբթին: Այս օրը Տերը վերջին անգամ Իր աշակերտների հետ նստեց ընթրիքի: Ընթրիքն այդ, իհարկե, սովորական, ամենօրյա մի հացկերույթ չէր, այլ հրեաների զատկական ընթրիքը: Այս հանգամանքն ինքնին խորհրդանշական էր. հասկանալի էր, որ Հիսուս Քրիստոսն Իր աշակերտների հետ արդեն իսկ խորհուրդ ունեցող տոն էր նշում, որի ժամանակ էլ պիտի տեղի ունենային իրադարձություններ, որոնց կարեւորությունն ու իմաստը աշակերտները միայն Հոգեգալուստից հետո պիտի հասկանային: Եվ այդ պատմական ընթրիքը՝ իր խորհրդի ողջ խորքայնությամբ, դարձավ Քրիստոսի Եկեղեցու վարդապետության հիմնաքարը:

Խորհրդավոր այս ընթրիքի մասին չորս ավետարանիչներն էլ գրում են՝ սուղ մանրամասներում որոշակիորեն լրացնելով միմյանց:

Մատթեոս ավետարանիչն ասում է, որ մովսիսական Զատկի օրը աշակերտները մոտենում են Ուսուցչին եւ հարցնում. *«Ուր ես կամենում՝ պատրաստենք քեզ համար զատկական ընթրիքը, որ ուտես»: Եվ Հիսուսը նրանց ասաց. «Գնացե՛ք քաղաք այսինչ անձի մոտ եւ նրան ասացե՛ք. «Վարդապետն ասում է՝ Իմ ժամանակը մոտեցել է, քեզ մոտ եմ անելու Զատիկը Իմ աշակերտների հետ միասին»: Եվ աշակերտներն արեցին, ինչպես Հիսուսն իրենց հրամայեց, ու պատրաստեցին զատկական ընթրիքը: Եվ երբ երեկո եղավ, տասներկու աշակերտների հետ սեղան էր նստել» (Մատթ. ԻԶ 17-20):*

Նախ փորձենք համառոտակի բացատրել, թե ինչ էր իրենից ներկայացնում հրեական Զատկի՝ Պասեքի (Պասեքը հրեաների ամենագլխավոր սրբազան տոնն է՝ նվիրված հրեա ժողովրդի՝ Եգիպտոսի գերությունից դուրս գալուն) ընթրիքը, եւ ինչպես էր այն ընթանում հրեաների մոտ: Հրեաները, մինչ կսկսվեր զատկական ընթրիքը, նախ անպայմանորեն **լվանում էին ոտքերը** եւ նոր միայն մոտենում սեղանին: Ըստ Մովսեսի պատվիրանի՝ սեղանին դրվում էր դառը կաթնուկը (վայրի հազար)՝ որպես խորհրդանիշը Եգիպտոսում կրած տառապանքների, խարոսեթը (մրգերից եւ ընկուզենից պատրաստված խյուսը)՝ որպես այն կավը, որից նրանք գերության ընթացքում կիզիչ արեւի տակ աղյուս էին պատրաստում, զոհաբերվող գառը (անպայմանորեն խորոված եւ ամբողջական՝ առանց **ոսկորները ջարդելու** (այստեղ արժե հիշել, որ խաչյալ Տիրոջ ոտքերը, ի տարբերություն կողքի երկու խաչվածների, չջարդեցին), բաղարջ հացը՝ ի նշան Եգիպտոսում հրեաների կերած անթթխմոր հացի, եւ ջրախառն գինին՝ որպես Աստծո օրհնություն: Ուտելիքի ու գինու համտեսումն ընթանում էր աղոթքներով, նախնյաց պատմության փառաբանմամբ եւ սաղմոսների ընթերցումով, եւ այս ամենը տեղի էր ունենում սահմանված կարգով, որն էլ իրավունք է տալիս ասելու, որ այդ ընթրիքը բացառապես ծիսական նշանակություն ուներ:



Ընթրիքի մասնակիցներին առաջին հերթին մատուցվում էր գինին (ողջ ընթրիքի ընթացքում իրավունք ունեին խմելու ընդամենը չորս գավաթ): Յուրաքանչյուրը, վերցնելով գավաթը, կարդում էր որեւէ կարճ՝ «օրհնյալ է» բառով սկսվող մի աղոթք՝ բարախ (barach), ապա տան տերը կամ մասնակիցներից ավագը կարդում էր Աստծուն փառաբանող զատկական բուն աղոթքը՝ կիդդուշը (kiddousch), որից հետո նոր միայն խմում էին: Երկրորդ գավաթն ըմպելուց առաջ լվանում էին ձեռքերը: Կրկին տան տերը կամ մասնակիցներից ավագը վերցնում էր բաղարջ հացը եւ բաժանում մասնակիցներին: Ամանում մնում էր մեկ հաց, որը նա երկու կես էր անում եւ մի կեսը դնում սեղանի մի անկյունում, ուր այն, ըստ մովսիսական օրենքի, պետք է մնար մինչեւ ընթրիքի ավարտը՝ պատահաբար ներս մտած աղքատին կամ ճամփորդին տալու համար: Բաղարջի այս կտորը կոչվում էր աֆիկոման (aphicoman), իսկ երկրորդ կեսը բաղարջ կտրողը թողնում էր իրեն: Ուտելիքից, ավելի ստույգ՝ գառան մսից օգտվելը կրկին ընթանում էր համապատասխան բարախներով: Ինչպես նշեցինք, սեղանին դրված բոլոր ուտեստները խորհուրդ ունեին, եւ ճաշակելուց առաջ համապատասխան աղոթք էին կարդում: Ընթրիքին ներկա երեխաներին խնամքով բացատրում էին դրանց նշանակությունները՝ պատվելով Մովսեսի հետեւյալ խոսքերը. «Եթե պատահի, որ ձեր որդիները հարցնեն ձեզ, թե՝ «Ի՞նչ է նշանակում այս ծիսակատարությունը», նրանց կպատասխանեք, որ Տիրոջ համար Զատկի զոհն է սա, այն Տիրոջ, ով Եգիպտոսում եգիպտացիներին կոտորելիս խնայեց իսրայելացիներին, փրկեց մեր ընտանիքները» (Ելք ԺԲ 26-27):

Բնականաբար, այսպիսի խորհրդանշական զատկական սեղան էր գցված նաեւ Վերնատանը, ուր Տերն Իր աշակերտների հետ վերջին անգամ պիտի ընթրեր, ճիշտ կլինի ասել՝ նշեր Պասեքը՝ ամբողջացնելով, բարձրակետին հասցնելով Իր երեքամյա քարոզչության տիեզերական խորհուրդը՝ Հաղորդությունը՝ երկրի վրա մարդու եւ Աստծո հնարավոր միավորումը:

Դժվար չէ կռահել, որ եթե Տիրոջ վերջին ընթրիքը լիներ սովորական կամ նույնիսկ տոնական մի ճաշկերույթ, հնարավոր է՝ իրադարձություններն այլ ընթացք ունենային: Սակայն սա մեր իմանալու բանը չէ: Եվ քանի որ մարդկային միտքը ի զորու չէ կանխորոշելու Աստծո ծրագրերը, ուստի հետեւենք առաքյալների հաղորդած տեղեկություններին:

Ինչպես վերը նշեցինք, հրեաները զատկական սեղան նստելուց առաջ լվանում էին ոտքերը: Ամենայն հավանականությամբ այս պարտականությունը դրված էր ծառաների կամ սեղանակիցներից փոքրերի վրա: Հովհաննես առաքյալը վկայում է. «*Նա վեր կացավ ընթրիքի սեղանից, մի կողմ դրեց զգեստները եւ մի սրբիչ վերցնելով՝ մեջքին կապեց: Եվ ապա ջուր վերցնելով՝ածեց կոնքի մեջ եւ սկսեց Իր աշակերտների ոտքերը լվանալ եւ սրբել մեջքին կապած սրբիչով,- տարակուսած աշակերտներին ասելով,- «Գիտե՞ք, թե այդ ինչ արեցի ձեզ, Դուք Ինձ Վարդապետ եւ Տեր եք կոչում. եւ լավ եք անում, քանի որ իսկապես ե՛մ. իսկ արդ, եթե Ես՝ Տերս եւ Վարդապետս, լվացի ձեր ոտքերը, դուք էլ պարտավոր եք միմյանց ոտքերը լվանալ» (Հովհ. ԺԳ 4-5, 12-14)*՝ հաստատելով Ոտնլվայի խորհուրդը: Այսպիսով, Ուսուցիչը հանդիսավոր կերպով հնազանդության օրինակ տվեց աշակերտներին, քանի որ, ինչպես Ղուկաս ավետարանիչն է ասում, «*Նրանց մեջ հակաճառություն առաջացավ, թե իրենցից ո՛վ պիտի մեծ համարվի*»: Սա Տիրոջ ժամանակին ասված խոսքերի իրական ու շոշափելի փաստումն էր. «*Եթե մեկն ուզում է առաջին լինել, բոլորից վերջինը եւ բոլորի սպասավորը պիտի լինի*» (Մարկ. Թ 34): Տիրոջ ու ծառայի միակամության ինչպիսի՜ օրինակ ու նաեւ՝ «*Լվացվածին ուրիշ բան պետք չէ, բայց միայն ոտքերը լվանալ, քանի որ ամբողջությամբ մաքուր է. եւ դուք մաքուր եք, բայց ոչ բոլորդ*» (Հովհ. ԺԳ 10): «Ոչ բոլորդ» ասելով՝ Տերն ի նկատի ուներ Հուդային եւ ակնարկում էր, որ դավաճանությունն այն մեղքն է, որ լվացում չունի:

*Շարունակությունը՝ էջ 5*

## Ցավակցական գիր...



*Սկիզբը՝ էջ 1*

*«Նրա ջանքերի եւ նվիրյալ աշխատանքի շնորհիվ Ղպտի Ուղղափառ Եկեղեցին նոր վերածնունդ ապրեց՝ եկեղեցիների, նոր թեմերի, ծխերի, կրթական եւ բարեսիրական հաստատությունների հիմնադրմամբ: Նրա գահակալության շրջանը հատկապես նշանավորվեց անապատական հայրերի վանական հին ավանդության վերածննդով»*,- ասաց Նորին Սրբությունը:

Խոսելով Հայաստանում եւ Եգիպտոսում ղպտի Պատրիարքի հետ ունեցած իր հանդիպումների մասին՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը նշեց. *«Հանգուցյալ Հայրապետը, որպես Հայ Եկեղեցու եւ ժողովրդի բարեկամ, իր եղբայրական այցերով պատվել է Հայոց Հայրապետներին: Մենք աղոթքով ենք հիշում 2002 թ. Հայաստան եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածին կատարած նրա եղբայրական այցը, երբ միասնաբար աղոթք վերառաքեցինք Միածնաէջ սբ տաճարում, Ծիծեռնակաբերդում հարգեցինք հիշատակը Հայոց Ցեղասպանության նահատակաց, պատգամներ եւ օրհնություններ փոխանցեցինք մեր Եկեղեցու զավակներին եւ ապագա հոգեւորականներին»*:

Նորին Սրբությունն ընդգծեց նաեւ հանգուցյալ Պապի՝ որպես քրիստոնեական միասնության եւ միջկրոնական համերաշխության ջատագովի, նշանակալից ներդրումը միջեկեղեցական եւ միջկրոնական հարաբերություններում, գործուն մասնակցությունը Էկումենիկ երկխոսություններում:

Վերջում Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Գերագույն հոգեւոր խորհրդի եւ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբանության անունից վերստին ցավակցություն հայտնեց Ղպտի Ուղղափառ Եկեղեցուն եւ Եգիպտոսի իշխանություններին:

## Նոր եկեղեցու հիմնարկեք Արցախի Ներքին Հոռաթաղ գյուղում

Մարտի 20-ին Արցախի Մարտակերտի շրջանի Ներքին Հոռաթաղ գյուղում, ձեռամբ թեմակալ առաջնորդ Պարգեւ արք. Մարտիրոսյանի, կատարվեց Ս. Գեւորգ եկեղեցու հիմնարկեքը:

Եկեղեցին կառուցվում է ՊԲ զորամասերից մեկի հրամանատար, գնդապետ Նորայր Ասլանյանի նախաձեռնությամբ: Ճարտարապետական նախագծի հեղինակը Մանուշակ Տիտանյանն է:



Պարգեւ սրբազանի հանդիսապետությամբ Արցախի թեմի եւ Զինված ուժերի հոգեւոր սպասավորները նախ գինով ու ջրով լվացին եւ ապա մյուռոնով օծեցին տասներկու առաքյալների ու չորս ավետարանիչների անուններով հիմնաքարերը, որից հետո դրանք տեղադրվեցին նոր կառուցվելիք եկեղեցու հիմքում: Եկեղեցու հիմքում տեղադրվեց նաեւ եկեղեցու շինարարության արձանագրությունը, որի վրա դրոշմվեցին ներկաների ստորագրությունները:

Պարգեւ սրբազանը կարեւորեց այն սերտ համագործակցությունը, որ դարերի ընթացքում դրսեւորել են հայ հոգեւորականն ու զինվորականը, որի հերթական վկայություններից է նաեւ Ս. Գեւորգ եկեղեցու կառուցման նախաձեռնությունը: Սրբազանը գոհունակությամբ նշեց, որ Արցախի թեմի հերթական եկեղեցին կարող է ծառայել ոչ միայն քաղաքացիական բնակչության, այլ նաեւ մոտակա զորամասերի զինվորյալ հայորդիների հոգեւոր կարիքների բավարարմանը:

Հիմնարկեքի արարողությանը ներկա էին ՀՀ նախագահի ռազմական խորհրդական, գեներալ-գնդապետ Միքայել Հարությունյանը, Արցախի պաշտպանության նախարար, ՊԲ հրամանատար, գեներալ-լեյտենանտ Մովսես Հակոբյանը, ՀՀ ՊՆ եւ Արցախի ՊԲ բարձրաստիճան զինվորականներ, զորամասի սպայական եւ զինվորական անձնակազմերը՝ հրամանատար Նորայր Ասլանյանի գլխավորությամբ, Մարտակերտի շրջանային եւ համայնքային իշխանությունների ներկայացուցիչներ, ազատամարտիկներ, Ներքին Հոռաթաղի բնակիչներ եւ ուխտավորներ:

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ Ա ՀԱՄԱԴԱՆՑԻ (1715-1725)

Արդեն մի տեսակ օրինաչափություն էր դարձել կաթողիկոսության համար թեկնածուի առաջադրումը՝ իր մահկանացուն կնքած վերջին կաթողիկոսի կողմից: Այս անգամ էլ նույնը կրկնվեց, քանի որ Ալեքսանդր Ա կաթողիկոսը, դեռ չմահացած, հրավեր էր ուղարկել Մովսես Ջուղայեցուն, որ նա գա եւ աթոռակալի: Խնդիրը հեշտությամբ էր բացատրվում, որովհետեւ Ջուղայի առաջնորդները կարող եւ ունեւոր էին եւ ի վիճակի էին շինարարական գործեր ձեռնարկելու: Սակայն տեղի ունեցավ անսպասելին: Մովսեսը, որչափ մենք կարող ենք դատել, թերեւս, միակն էր, որ պաշտոնապես հրավիրվելով կաթողիկոսական աթոռն զբաղեցնելու՝ հրաժարվեց ստանձնել այդ պաշտոնը: Ճիշտ է, կաթողիկոսությունից հրաժարվողներ եղել էին, սակայն դա կատարվել էր հիվանդության կամ որեւէ այլ բարդության հետ կապված: Մովսեսին դիմեցին մի քանի անգամ, որ նա հանձն առնի կաթողիկոսությունը, սակայն նա անդրդվելի մնաց՝ հայտարարելով, որ Մայր Աթոռի միաբանությունը թող մտքից դա հանի, քանի որ այն իր գործը չէ: Հրաժարականի պատճառները հայտնի չեն, ուստի մնում է հանելուկ, թե ինչու այդ բազմաշխատ եւ բազմարդյուն անձը, որ այնքան օգտակար էր եղել Նոր Ջուղայի աթոռին, հրաժարվեց այդ մեծ պատվից: Անգամ Հովհաննես Կոլոտը, որ բանիմաց մարդ էր, գովասանական բացատրություններով էր նրան դիմել Երուսաղեմի գործի հետ կապված: Ավելորդ է ասել, որ նա անկարող մեկը չէր եւ վաստակաշատ գործունեություն ծավալեց Նոր Ջուղայի աթոռին՝ եւս տասը տարի՝ մինչեւ 1725 թվականի մարտի 1-ը, այսինքն՝ մինչեւ իր մահը: Մ. Օրմանյանի կարծիքով՝ նա պարզապես իր խաղաղ դիրքը գերադասել է Էջմիածնի խռովահույզ գործունեությունից: Նրա օրոք Նոր Ջուղայի Ամենափրկչի վանքում կային 2 եպիսկոպոս եւ 17 նշանավոր վարդապետ, իսկ քաղաքի 14 եկեղեցիներում հովվություն էր անում 62 քահանա: Սակայն, այնուամենայնիվ, Մովսեսը խաղաղ կյանք չունեցավ՝ Նոր Ջուղայում եւս աֆղանների ապստամբության եւ Սպահանին տիրելու պատճառով:

Մայր Աթոռի միաբանությունը, Մովսեսի հրաժարականից հետո անգամ, որոշեց կաթողիկոսության թեկնածու փնտրել նորջուղայեցիների մեջ: Նրանք հրավիրեցին Սբ Ամենափրկչի միաբան երկու եպիսկոպոսներից Աստվածատուրին, որը պարսից իշխանությունների հաստատումն ստանալուց հետո՝ 1715 թ. մայիսի 7-ին, եկավ Էջմիածին եւ թերեւս հաջորդ օրն էլ՝ Կարմիր կիրակիին, օծվեց կաթողիկոս: Նրա նախորդ գործունեության մասին պատմությունը հիշատակներ չի պահպանել: Նրա կաթողիկոսական գործունեությունն արժանավոր եղավ: Հեզաբարո բնավորություն ունեցող, շնորհաշատ ու ջերմեռանդ այր էր, որ հանդես էր գալիս նաեւ բարերարությամբ: Նա նորոգություններ կատարեց Մայր տաճարում՝ Իջման տեղը մարմարից կառուցեց, նորոգեց ավագ խորանը, վերաշինեց եկեղեցու սյուները, սալահատակեց, ջրհոր բացեց, ինչպես նաեւ վանական կալվածքները պետական փարմաններով ապահովեց: Այս ամենը նա կատարեց իր հովվապետության առաջին հինգ տարում, հետո խաղաղությունը խախտվեց, պատերազմ սկսվեց, եւ Էջմիածինը դրանից շատ տուժեց: Ասվում է, որ իբր հնազանդության նամակ է ուղարկել Հռոմի պապին, սակայն հռոմեական այլ գործիչներ ու հեղինակներ այդ բանը չեն կրկնում, ինչը կասկածելի է դարձնում վերը հիշվածը: Չկա նաեւ նամակի պատճենը, եւ մնում է ենթադրել, թե դա լատին քարոզիչների դեմ Ալեքսանդրի գանգատի կրկնությունն էր, իսկ եթե մեջը գովասանքի խոսքեր են եղել, ապա դավանական կարեւորություն չեն ունեցել: Իսկ հնազանդություն կոչվածը նման նամակներին հատուկ ոճն է, երբ դիմացինին գովասանքի խոսքեր են ասվում, իսկ սեփական անձը նվաստացնում են: Պահպանվել է 1718 թ. հունիսի 19-ի նշումով մի կոնդակ՝ Վենետիկում գտնվող Ջուղայեցի եւ այլ վաճառականներին, որ Էջմիածնի համար մի քանի բեռ կանթեղ, ջամ եւ այլ ապակեղեն ուղարկեն, որում, սակայն, ոչ մի խոսք չկա հռոմեադավանության վերաբերյալ:



Այս ընթացքում խռովահույզ էր կացությունը Կ. Պոլսում: Հովհաննես Գանձակեցին Կ. Պոլսի պատրիարք էր դարձել 1714 թ. մարտի 21-ին՝ Ալեքսանդրի մահվանից 8 եւ Աստվածատուրի կաթողիկոսությունից 14 ամիս առաջ: Նա դեռ նոր էր աթոռակալել, երբ լատիններն իրենց հետեւորդներին սկսեցին ստիպել, որ հայկական եկեղեցիներ չհաճախեն եւ գնան միայն կաթոլիկ եկեղեցիներ: Կառավարության խստությունները լատինների դեմ պայմանավորված էին Վենետիկի հետ հարաբերությունների խառնակվելով, որը պատերազմի հավանականություն էր ստեղծում: Գանձակեցին սկզբում կոչ արեց եւ հորդորեց նրանց հաճախել հայկական եկեղեցիներ, որպեսզի կառավարության կասկածամտությունն առաջ չբերեն, քանի որ իրեն էլ հանձնարարված էր հսկել իր հոտի վարքագծի վրա: Լատին քարոզիչները, սակայն, ավելի ուժեղացրին իրենց արգելքը եւ պղտորեցին մթնոլորտը՝ մտածելով, թե ֆրանսիական դեսպանի հովանավորությամբ կարող են հաղթել հայոց պատրիարքությանը, քանի որ Ֆերիոլի հաջորդ՝ Պյեր-Պաչո կոմս Դեզալիորը նույնքան մոլեռանդ էր գործում, որքան նրա նախորդը. Գանձակեցին իր փոխանորդին ուղարկեց կաթոլիկ եպիսկոպոսի մոտ, որ խրատի իր եկեղեցականներին եւ զգուշացնի կառավարության կողմից հնարավոր տհաճ ձեռնարկների մասին: Դրան հակառակ՝ լատին եպիսկոպոսը հավաքեց կաթոլիկ կրթություն ստացած հայերին եւ հռոմականությանը հարած եկեղեցականներին եւ նրանց հանձնարարեց պատրիարքին զահընկեց անել եւ իրենցից մեկին պատրիարքական աթոռ բարձրացնել: Այդ նպատակով սկսեցին դրամ հավաքել՝ հնարավոր ծախսերի համար: Պատրիարքի դեմ գործողների գլուխ էր կանգնել Մելքոն Թասպասյան եպիսկոպոսը, որը ցանկանում էր պատրիարք դառնալ: Նրան հետեւում էին Հովհան Նիկոմիդացին, Սարգիս ու Երեմիա եպիսկոպոսները եւ ուրիշներ: Իշխանություններին այդ ամենը հայտնի դարձավ: Պատրիարքին հանձնարարվեց ոչ մեկին ոչինչ չասել, եւ մեծ վեզիրը ձերբակալեց այդ երեք եպիսկոպոսներին եւ անհայտ վայրում բանտարկեց: Կաթոլիկներին հարածներին թվաց, թե ձերբակալությունն ու բանտարկությունը հայոց պատրիարքի ձեռքի գործն են, ուստի մի հարյուր հոգով մեծ վեզիրին բողոքեցին՝ ամբաստանելով պատրիարքին: Նրանց մտքով չէր անցնում, որ կատարվածի հեղինակը հենց մեծ վեզիրն է:

Մեծ վեզիրը նրանց ընդունեց եւ հայտարարեց, որ գործին ծանոթ է, եւ որ դա Երուսաղեմի հաշիվների հետ կապված խնդիր է՝ պատրիարքի եւ հիշյալ երեք եպիսկոպոսների միջեւ, որոնք եւս երեք ընկեր ունեն, եւ ինքը դատ կբացի, եթե նրանց էլ բերեն: Բողոքողները դրան հավանեցին, բայց մյուս երեքը, որոնց պահել էր լատին եպիսկոպոսը, այդպես էլ մեջտեղ չեկան:

Շարունակությունը՝ էջ 4

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ի ՊԱՏԻՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՅՐԱՆ ՕՀԱՆԵԱՆԻ

Աշխատանքային պաշտօնական այցով Միացեալ Նահանգներ գտնուած ՀՀ Պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեան եւ իր տիկինը հայկական համայնքի ներկայացուցիչներու հետ եւս ունեցան քանի մը հանդիպումներ, որոնց գլխաւորը եղաւ Ամերիկայի Հայոց Արեւելեան թեմի առաջնորդարանէն ողջունեց ներկայութիւնը Նախարար Սէրան Օհանեանի եւ իր գլխաւորած պատուիրակութեան անդամներուն եւ ըսաւ. *«Բոլորիս համար մեծ ուրախութիւն եւ հրճուանք է ողջունել Ձեր վերադարձը Նիւ Եորք քաղաք՝ Ս. Վարդան Մայր տաճար եւ Հայ Եկեղեցւոյ առաջնորդարանի այս կեդրոնը: Կը շեշտեմ այդ ոգիով մենք խանդավառուեցանք»:* Ապա սրբազան հայրը արտայայտուեցաւ նախարարի անձին եւ իր ստանձնած պատասխանատու առաքելութեան մասին:

Այնուհետեւ դեսպան Կարէն Նազարեան յայտարարեց, որ ապրիլ 28-ին համայնքը կը պատրաստուի մեծ շուքով նշելու





ներս, Նիւ Եորք: Այդ պատուիրակութեան մաս մը կը կազմէ նաեւ նախարարին առաջին տեղակալ Դաւիթ Տոնոյեանը: Ներկայ էին ՄԱԿ-ի մօտ Հայաստանի Հանրապետութեան մնայուն եւ լիազօր դեսպան Կարէն Նազարեան, դեսպանատան անձնակազմի կարգ մը դիւանագէտներ, ինչպէս նաեւ Ուաշինկթընի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպանատան զինուորական կցորդ գնդ. Մեսրոպ Նազարեան:

Հանդիպմանը Խաժակ արք. Պարսամեան բացման խօսքով *Ձեր վերադարձը, որովհետեւ ամերիկահայ գաղութի յարգելի եւ սիրելի ղեկավարներուն հետ կը յիշենք 18 տարիներ առաջ ձեր առաջին այցելութիւնը Նիւ Եորք քաղաք, Ս. Վարդան Մայր տաճար եւ առաջնորդարանի այս կեդրոնը, ինչպէս նաեւ թէ՛ ուրախութեամբ եւ թէ՛ ուրախութեամբ կը վերյիշենք, որ Դուք՝ Ձեր ներկայութեամբ մեզ յուսադրեցիք, որովհետեւ Արցախի ազատագրութեան պայքարի յաղթանակի այդ օրերուն՝ Ձեր ներկայութեամբ մեզի բերիք մեր մարտիկներուն ոգին, եւ* Հայոց ազգային բանակի 20-րդ տարեդարձը՝ Նիւ Եորքի մէջ, նախաձեռնութեամբ Թէքէեան մշակութային միութեան:

Ապա իր շնորհակալութեան խօսքն ըսաւ Նախարար Սէյրան Օհանեան: Իր խօսքի աւարտին Նախարարը Հայաստանի զինեալ ուժերու խորհրդանիշը ներկայացնող յուշամետալ մը յանձնեց Խաժակ արք. Պարսամեանին:

Աւարտին Տիար Նախարարը պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն:

*ԴԻՒԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ*

## Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահն օրհնեց հայ շախմատիստներին



Օրերս Բուլղարիայի Պլովդիվ քաղաքում մեկնարկել է շախմատի՝ Եվրոպայի անհատական տղամարդկանց առաջնությունը: Այս մրցաշարում Հայաստանը ներկայացնում է տասնմեկ գրոսմայստեր: Պլովդիվ է ժամանել 39 երկրից շուրջ 350 շախմատիստ:

Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ Աբգար վրդ. Հովակիմյանը Պլովդիվում հանդիպեց եւ իր օրհնությունը բերեց հայ շախմատիստներին՝ մաղթելով հաջողություններ ու հաղթանակներ այս մրցաշարում: Հայր սուրբը հյուրընկալվեց նաեւ Եվրոպայի շախմատի ֆեդերացիայի պրեզիդենտ Սիլվիո Դանաիլովի կողմից, որը ջերմ հիշողություններ ու անմոռանալի տպավորություններ փոխանակեց իր Հայաստան կատարած այցելությունից:

*Դիվան Բուլղարիայի հայոց թեմի*

## Նոր նշանակումներ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ կատարվել են մի շարք նշանակումներ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու թեմերում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի միաբան Սահակ աբեղա Շաքարյանը, ավարտելով հովվական ծառայությունը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմում, ծառայության է կոչվել Արցախի թեմում:

Մովսես քհն. Աշուրյանը, ազատվելով Գուգարաց թեմում ստանձնած պարտականություններից, նշանակվել է հոգեւոր սպասավորության Վիրահայոց թեմում:

Օշական քհն. Խաչատրյանը, ավարտելով ծառայությունը ՀՀ Զինված ուժերում, ծառայության է կոչվել Ռումինիայի հայոց թեմում:

# ԳՈՂԳՈԹԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ



Հազարավոր տարիներ մարդկությունն զգաց իր ոչնչությունը մեղքերի անդունդի մեջ (Իմաստ. Բ 5), տառապեց՝ սպասելով խոստացված Մեսիային, Փրկչին: Եվ երբ ժամանակն իր լրումին հասավ, Աստված մարդացավ... Եկավ «Աստծո Գառը, որ վերացնում է աշխարհի մեղքը» (Հովհ. Ա 29): Եկավ կատարելու մարդկության փրկագործությունը, ջնջելու ու վերացնելու այն անեծքը, որը մեր նախահոր՝ Ադամի պատվիրանազանցության պատճառով ծանրացել էր ողջ մարդկության վրա: Եկավ մարդկային ազգին ազատագրելու մեղքի ու մահվան կապանքներից՝ մարդկության առջեւ վերստին բացելով երկնքի արքայության ճանապարհը...

Գեթսեմանիի պարտեզում հանկարծակի անտանելի ու անելանելի կացության մեջ ընկած Հիսուսին հետո բոլոր իրավիճակներում տեսնում ենք արի ու հզոր, ոչ մի նեղությունից չընկճվող ու հակառակությունից չշփոթվող, այլ դատարանների առջեւ, ե՛ւ տանջանքների պահին, ե՛ւ խաչի վրա անվրդով ու անսասանորեն տոկացող:

Հիսուսը ձերբակալվում է Իր 12 աշակերտներից Հուդա Իսկարիովտացու մատնությամբ: Ինչպես Ավագ չորեքշաբթի օրվա շարականում է ասվում, «Ոչնչից երկինքն ու երկիրը ստեղծողը, այսօր վաճառվում է դյուրագին երեսուն արծաթով»: ...Քահանաների ու ծերերի գլխավորությամբ Հիսուսի վրա եկող, սրերով ու մահակներով զինված ամբոխը Նրան ձերբակալում է՝ որպես մի ավազակի: Եվ այդ եղավ, որպեսզի մարգարեների գրվածքները կատարվեն (Մարկ. ԺԴ 48): Այդ պահից սկսվում են Քրիստոսի չարչարանքները... Նրան նախ տանում են Կայիափա քահանայապետի մոտ, որտեղ Նա հարցաքննվում է եւ... հայտարարվում «մահապարտ»: Ժողովը փակվում է՝ հետաձգվելով մինչ առավոտ: Հիսուսը հանձնվում է քահանայապետի բարապաններին, որպեսզի հսկեն Նրան ու վարվեն Նրա հետ, ինչպես կամենան: Եվ ողջ գիշեր Աստվածորդին ենթարկվում է քստմնելի ծաղկանքի ու ծաղրուծանակի, քանզի Նրան պահապանողները ծիծաղում էին Նրա վրա եւ խփում, ծածկում էին Նրա երեսը եւ տանջում, հարցնում էին Նրան ու ասում. «Մարգարեացիր, ո՞վ է, որ քեզ խփեց» (Ղուկ. ԻԲ 63, 64): Նա, Ում հրեշտակներն իսկ չէին համարձակվում նայել, այսօր անարգվում է Իր իսկ ծառաների՝ մարդկանց կողմից... Քահանայապետներն ու ժողովրդի ծերերն առավոտյան ժողովի ժամանակ խորհուրդ են անում Հիսուսի դեմ՝ Նրան սպանելու համար (Մատթ. ԻԷ 1): Եվ կապելով անարգված Քրիստոսին՝ տանում հանձնում են Պիղատոսին: Վերջինս հարցաքննում է Հիսուսին ու «Նրա մեջ որեւէ հանցանք չի գտնում»: Եվ իմանալով, որ Նա գալիլիացի է, հանձնում է Հերովդեսի դատին, ով արհամարհելով ու ծիծաղելով տառապյալ Քրիստոսի վրա՝ վերստին ուղարկում է Պիղատոսի մոտ: ....Ի վերջո, Պիղատոսը, «կամենալով ամբոխին գոհացնել, նրանց համար տոնի առիթով արձակում է հանցագործ Բարաբբային: Իսկ Հիսուսին ծեծել տալով՝ նրանց ձեռքն է հանձնում, որպեսզի խաչը հանեն» (տե՛ս Մարկ. ԺԵ 15):

Ինչպես Պիղատոսը, այնպես էլ իր զինվորները հրեաների նկատմամբ անարգական վերաբերմունք ունեին, ուստի առիթը բաց չեն թողնում Հիսուսին խայտառակ ծաղկանքի ենթարկելու համար: Երբ գանակոծությունը բավականին խորանում է, զինվորները դադարեցնում են ծեծը եւ խոշտանգված Քրիստոսին ենթարկում են ծաղրուծանակի: Ծաղրելը դեռ բավական չէր, Նրան նաեւ տանջում ու նեղում են, թքում երեսին, ապտակում, ավելի կսկծացնելու համար՝ եղեգով խփում փշերով ծածկված գլխին: Ինչպես դարձյալ Օրմանյանն է նկատում, «փշե պսակի պատրաստման համար գործածված ճյուղերը փշատենու կամ վայրի եղեսրափշի չոր ճյուղեր էին, իսկ փշատենու ճյուղերը բավականին սուր ու ամուր են, մանավանդ գանգի շրջանում խայթող ու սաստիկ ցավ պատճառող, արյունալից վերքեր կարող են պատճառել՝ գլուխն ու երեսը զարհուրելի կերպարանքի վերածելու չափ...»: Եվ այսքան տառապանքներից, գանակոծությունից ու խոշտանգումներից հետո Հիսուսը դեռ պետք է կրեր Իր խաչափայտը: Իսկ խաչափայտի նշանավոր մասունքների հետազոտությունները ցույց են տվել, որ Հիսուսի խաչափայտը մայրի ծառի ընտանիքից էր, որ պատկանում էր **ծանր** փայտերի տեսակին: Ուստի այն կրելը տառապյալ ու ուժասպառ Քրիստոսի համար խիստ դժվար էր... Տեսնելով, որ Նա չի կարողանում տոկալ խաչափայտի ծանրության տակ, զինվորները Սիմոն Կյուրենացի անունով մեկին, որը հանդից էր գալիս, պարտադրում են շալակել այն ու Հիսուսի հետեւից բարձրացնել Գողգոթա, ինչպես վկայում է Ղուկաս ավետարանիչը (տե՛ս Ղուկ. ԻԳ 26): Եվս մեկ կարեւոր հանգամանք. Քրիստոսի կրած տառապանքների սաստկությունն առավել պատկերացնելու համար, տեղին է հիշել սբ Գր. Տաթեւացու այն միտքը, որի համաձայն՝ Տիրոջ մարմինը, լինելով անարատ, անապական ու զերծ մեղքից, **աչքի բիբի պես նուրբ ու շատ զգայուն էր,** ուստի Նրա կրած չարչարանքները տաժանելի ու սոսկալի էին: Ահա թե ինչու Երեմիա մարգարեն Քրիստոսի անունից ասում է. «Ձեզ եմ ասում, ձեզ, ով անցորդներ, ետ դարձեք, նայեցեք, տեսեք՝ Ինձ հասած ցավերի նման ցավեր եղե՞լ են արդյոք» (Ողբ Երեմիայի Ա 12): Նրա տառապյալ տեսքի ու խոշտանգված մարմնի նկարագրությունն է տալիս եւ Եսայի մարգարեն՝ ասելով. «Ո՛չ տեսք ուներ Նա եւ ո՛չ վեհություն: Նայեցինք մենք Նրան, բայց Նա ո՛չ տեսք ուներ եւ ո՛չ էլ գեղեցկություն: Նրա տեսքն ավելի անարգ էր ու նսեմ, քան բոլոր մարդկանց որդիներինը: Նա հարվածների ենթակա մի մարդ եղավ, որ ցավերին համբերել գիտե... Նա մեր մեղքերն էր վերցնում եւ մեզ համար չարչարվում: ...Բայց Նա խոցվեց մեր մեղքերի համար եւ մեր անօրինությունների համար դատապարտվեց. մեր խաղաղության համար Նա պատիժ կրեց, եւ **Նրա վերքերով մենք բժշկվեցինք**...» (Եսայի ԾԳ 2-6):

...Երբ մահապարտների թափորը հասավ Գողգոթա (ուր, ըստ ավանդության, թաղված է մեր նախահայր Ադամը), Քրիստոսը խաչվեց երկու ավազակների միջեւ, որպեսզի իրականանար մարգարեությունը. «Նա հանցավորներին հավասար համարվեց: Նա շատերի մեղքերը կրեց եւ նրանց անիրավությունների համար դատապարտվեց» (Եսայի ԾԳ 12):

Սոսկալի է անգամ պատկերացնելը... **Գողգոթայի բարձունքում մարդը խաչում էր իր Արարչին...** «Նա, Ով անօրենություն չգործեց, եւ նենգությունը տեղ չգտավ Նրա բերանում» (Եսայի ԾԳ 9), Իր անմեղ արյան հեղմամբ քավում էր մարդկության մեղքը:

*Շարունակությունը՝ էջ 7*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ԱՍՏՎԱԾԱՏՈՒՐ Ա ՀԱՄԱԴԱՆՑԻ (1715-1725)

*Սկիզբը՝ էջ 3*

Հասկանալի է, որ դա ամբոխին զայրացրեց, քանի որ լատին եպիսկոպոսն իրենց մեջտեղ էր նետել, իսկ այժմ վտանգի էր ենթարկում: Լատին եպիսկոպոսն ստիպված եղավ երեք եպիսկոպոսներին հանձնել, իսկ ամբոխն էլ նրանց հանձնեց մեծ վեզիրին՝ Հովհան Նիկոմիդացի եպիսկոպոսի հետ միասին: Ինչ վերաբերում է Սարգիս եւ Երեմիա լատինամետ եպիսկոպոսներին, ապա նրանք բանտում խլամություն էին ընդունել եւ գործից ետ քաշվել: Պատրիարքն էլ է կանչվում դատարան եւ հայտնում իր բողոքը, որ լատինները կամենում են օտարացնել իր հոտը եւ արգելում են հայերին հայոց եկեղեցիներ հաճախել: Սակայն հարկ է նշել, որ նա մեծ վեզիրի ծրագրին մասնակից չէր: Նա լոկ նշում էր, որ փորձում են ժողովրդին արգելել տուրքերը տալ Հայոց Եկեղեցուն եւ տալ Կաթոլիկ Եկեղեցուն: Ըստ որում, ավելացնում է նա, հիշյալ չորս եպիսկոպոսները լատինների գործի կատարողներն են: Մեծ վեզիրն էլ այդ չորսից բացատրություն է պահանջում: Հիշյալ չորս անուններից հանդես է գալիս Թասպասյանը՝ ասելով իրենց կեցվածքի պատճառը: Մեծ վեզիրը նրա խոսքը համարում է մեղքի խոստովանություն եւ որպես օտարներին աջակցողների ու կառավարության դեմ հանդես եկողների՝ դատապարտում թիարանի: Նրանց բանտարկում են 1714 թ. վերջերին, սակայն նրանցից երեքը թիապարտությունից ազատվում են կաշառք տալով, իսկ Մելքոն եպիսկոպոսը, որպես շարժման պարագլուխ, երկու տարի մնում է բանտում եւ այնտեղ էլ վախճանվում: Որպես Մելքոնի գործակիցներ՝ դատապարտվում են նաեւ Մելտոն Բալաթցին եւ Չախմախօղլուն, որոնցից առաջինն ազատվում է ուրացությամբ, իսկ երկրորդը՝ կաշառքով:

Լատինների բռնած երկդիմի դիրքը շատերին հեռացրեց նրանցից, իսկ մեծ վեզիրի՝ օտարասիրության մեղադրանքով դատավճիռներն էլ, որոնք շարունակվեցին, շատերին վախեցրին: Հանձնարարվեց հսկել նման գործողությունները նաեւ գավառներում ու զսպել հռոմեամետներին: Հասկանելի է, որ նոր ձերբակալություններ եղան, որոնց մեջ էր Աբրահամ Արծրունյան եպիսկոպոսը, որը Կ. Պոլսի թիարան ուղարկվեց, իսկ Գրիգոր Եվդոկացի վարդապետը եւ Կարնեցի մի քանի քահանաներ բանտարկվեցին, բայց տուգանքով ազատվեցին: Արծրունյանն էլ ազատվեց՝ իր իրեա բանտակիցների միջնորդությամբ: Իսկ գավառներում նման քաղաքականությունը շարունակվեց նաեւ հաջորդ տարում:

Դեռեւս 1714 թ. վերջերին ծրագրվել էր պատերազմը Վենետիկի հանրապետության դեմ, իսկ 1715 թ. ապրիլին սուլթան Ահմեդ Գ-ն եւ մեծ վեզիր Տամատ Ալին, նավատորմիղով դուրս գալով Կ. Պոլսից, գրավեցին Թինոս կղզին, իսկ հունիսին թուրքական բանակը մտավ Պելոպոնես: Հուլիսին գրավվեց Կորնթոսը, հետո՝ Պելոպոնեսի ցամաքային մասում գտնվող Նաուպլիա, Քորոն, Նավարին եւ Մեթոն բերդաքաղաքները: Նվաճվեցին Չերիկո եւ Կրետե կղզիները, եւ արդեն 1715 թ. նոյեմբերին թուրքական տիրապետությունը հաստատվեց ոչ միայն Պելոպոնեսում կամ Մորեայում (Մոռայում), այլեւ՝ արխիպելագում: Հենց այդ ժամանակ էլ լատինները, փաստորեն, հակակառավարական կեցվածք էին որդեգրել՝ մեջտեղ բերելով հայ հռոմեադավաններին՝ դառնալով վերջիններիս դժբախտության պատճառ:

1715 թվի ապրիլին՝ Զատկից հետո, Երուսաղեմից Կ. Պոլիս եկավ Հովհաննես Կոլոտ վարդապետը եւ ամբողջությամբ նվիրվեց Երուսաղեմի կացության բարելավմանը: Նա ամենուրեք հայտնում էր Երուսաղեմի դժվարությունների մասին եւ օգնություն խնդրում: Միաժամանակ նա կամենում էր Երուսաղեմն ազատել Կ. Պոլսի պատրիարքության ենթակայությունից, այլ խոսքով՝ երկու պատրիարքությունների միավորումը լուծարել եւ Կ. Պոլսի պատրիարքության կողմից հսկողությունը սահմանափակել: Հարկ է խոստովանել, որ դրան Հովհաննես Գանձակեցին որեւէ ձեւով չընդդիմացավ, թեկուզ եւ սխալվել եւ Երուսնղեմ էր ուղարկել Հովհաննես Բալըքեսիրցուն: Համենայն դեպս, այդ սխալը նա գիտակցաբար չէր գործել: Կոլոտը կարողացավ ժողովրդին համոզել, եւ մեծամեծները նպաստեցին նրա ձեռնարկին: Այդ մեծամեծների մեջ էին Հարություն Մուրադյան Ապուչեխցին, Հարություն Թեւեքելյան Ապուչեխցին, Սարգիս Խալֆա Կեսարացին, Իսրայել Կոստանդնուպոլսեցին եւ Լութվինը, որոնք իրենց կողմը գրավեցին Սեղբեստրոս Երեւանենց Ակնեցուն (հմա՛ Սեղբոս ամիրա), որը կոչվել է նաեւ մահտեսի՝ Երուսաղեմ ուխտի գնացած լինելու համար: Դժվար էր, սակայն, այդ գործն իրականացնել: Կոլոտին ասում էին, որ դառնա պատրիարք եւ այդ գործն իրականացնի, իհարկե, մեծամեծների գիտությամբ եւ հավանությամբ: Նա սկսեց խուսափել՝ առաջ բերելով բազմաթիվ պատճառաբանություններ: Սակայն չորս տարվա պայմանաժամը ծանրացել էր նրա ուսերին, ուստի նա, ի վերջո, համաձայնեց: Հովհաննես Գանձակեցին էլ վեհանձնորեն խոստացավ կամովին հրաժարվել պատրիարքությունից:



*Շարունակելի*

**Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**
*ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր*

# ԼԻՆԵՆՔ ՄԱՍՆԱԿԻՑԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ



*«Նրա վրա ներդաշնակությամբ հաստատված ամբողջ կառույցը Տիրոջով վերածում է մի սուրբ տաճարի, որի մեջ դուք էլ նրա հետ կառուցվում եք որպես բնակարան Աստծու՝ Սուրբ Հոգու միջոցով»:*

**(Եփես. Բ 21-22)**

Պողոս առաքյալն իր այս խոսքերն ուղղում է Եփեսոսի նորադարձ քրիստոնյաներին, որոնք Եկեղեցու հովանու տակ փառաբանելով Աստծուն՝ միասին դառնում են նույն կառույցի, նույն ընտանիքի անդամ, ուր բնակվում է Աստված՝ Իր Սբ Հոգով:

Արարիչ Աստծու ձեռակերտը՝ մարդ արարածը, մանկության օրերից որոնումների մեջ է ապրում: Կյանքը ցույց է տալիս, որ մենք, երբ հասնում ենք որոշ տարիքի, մեր հաջողությունների կամ անհաջողությունների մեջ, միեւնույն է, անբավարարության զգացում ենք ունենում եւ երազում ենք մի անգամ եւս ծնվելու մասին, որպեսզի բոլորովին այլ ձեւով ապրենք՝ անկատար թվացող մեր նպատակներին հասնելու համար: Հագենալու ձգտումը, որ անսահմանափակ է, մի հիվանդություն է, որ դժբախտացնում է մեզ, մանավանդ եթե ավելացնենք բախտախնդրության եւ փառամոլության ախտերը: Երբ կորցնում ենք մեր դիրքն ու հեղինակությունը, դառնում ենք կենդանի դիակ: Այլ բան է, երբ մեր ընչաքաղցության բարդույթից ճիշտ ժամանակին ազատվելով՝ մտածում ենք օգտավետ լինել այլոց եւս, եւ այդ դեպքում, կարծես, իմաստավորվում է վերստին ծնվելու մեր երազանքը՝ մեր թերացումները շտկելու ցանկությամբ: Այս մասին՝ քրիստոնեական վերածննդի մասին է խոսում ողջ Աստվածաշունչը: Ահա թե ինչու, չունենալու համար խոր հիասթափություն, նույնիսկ երբ թաղված ենք նյութական շռայլ վայելքներին մեջ, Հիսուսը հորդորում է, որ մեր հարստությունը դիզենք երկնքում, ուր ո՛չ գողն է հափշտակում, եւ ո՛չ էլ ցեցն է ապականում: Դա հոգեւոր, աննյութական արժեքներով ապրելու մեր կյանքն է, որի դեպքում Տերը խոստանում է մեզ այն **առավել** տալ: Հաճախ ենք տեսնում հղփացած, եսամոլ մարդկանց, ականատես ենք լինում, թե ինչ վախճան են ունենում: Թեեւ հարուստ, բայց՝ դժբախտ: Իսկ երկնքում հարստություն դիզել կամեցող մարդը կարող է ապրել նվազ նյութական բարիքներով, բայց իր համեստ հնարավորություններին բաժնեկից է դարձնում նաեւ իր շրջապատի մարդկանց: Ահա այս մասին է խոսում Պողոս առաքյալը, երբ ասում է եփեսացի հավատացյալներին, որ նրանք ներդաշնակորեն կառուցվում են՝ լինելու մի բնակարան, ուր Աստված ապրում է Հոգով: Բազմաթիվ քրիստոնյա հայորդիների օրինակով տեսնում ենք, թե ինչպես իրենց բարի գործերով իմաստավորել են իրենց կյանքը, իրենց անունները հավերժացել, հիշատակության եւ օրհնության արժանի դարձրել իրենց աստվածահաճո գործերով: Հավատում ենք, որ մեզ շրջապատող բազում գործարարներ ի վերջո հագենալու են իրենց ունեցվածքից եւ հետեւելու են մեր ազգի այն զավակներին, որոնց անունները գրված են պատմության մեջ՝ ոսկե տառերով: Սա է իսկական քրիստոնեական սիրո եւ կամեցողության **առավել** կյանքը: Սա նշանակում է հաշտ ու խաղաղ ապրել մեր ներքին ձայնի հետ, արթնացնել խիղճը, դառնալ բնակարան Սբ Հոգու՝ հնազանդվելով Աստծու կամքին: Քրիստոսով մեր կյանքը իմաստավորվում է, հզորանում եւ կատարելագործվում, իսկ գթասրտության, ծառայասիրության, զոհողությունների եւ սգավորներին վշտակցելու դրսեւորումներով մեզ մղում ենք դեպի ուրախ եւ երջանիկ, պտղաբեր կյանքի եւ զարդարվում կենսանորոգ առաքինություններով: Սա է իսկական վերածնության իմաստը, սա է իրական հոգեւոր արժեքներ վայելելու ճանապարհը, սա է Քրիստոսի՝ մեզ խոստացած՝ **Իր** խաղաղությունը, որ չի կարող աշխարհը տալ:

Աշխարհի տվածն ի վերջո դառնում է ավելորդ բեռ՝ անիմաստ եւ անբովանդակ, որովհետեւ նա չի հագեցնում հոգու քաղցը, չի կարող սնունդ մատակարարել հոգու աշխարհին, իսկ աստվածակերտ, անապական, անձեռակերտ, անձեռնմխելի հոգեւոր հավիտենական արժեքները սահման եւ ժամանակ չեն ճանաչում: Երեմիա մարգարեն, նկատի ունենալով խաղաղություն եւ ներդաշնակ կյանք որոնող մարդու վիճակը, ասում է. «Կփնտրեք Ինձ ու կգտնեք, որովհետեւ փնտրելու եք ձեր ամբողջ սրտով» (ԻԹ 13):

*Շարունակությունը՝ էջ 6*

# «ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԸՆԹՐԻՔԸ» ԵՎ ՆՐԱ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ



*Սկիզբը՝ էջ 2*

Մատթեոս ավետարանիչը գրում է. *«Եվ մինչ նրանք դեռ ուտում էին, Նա ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզանից մեկն Ինձ մատնելու է»: Եվ նրանք խիստ տխրեցին. նրանցից յուրաքանչյուրնը սկսեց ասել Նրան. «Միթե ե՞ս եմ, Տե՛ր»: Նա պատասխան տվեց ու ասաց. «Ով իր ձեռքն Ինձ հետ պնակի մեջ մտցրեց, նա՛ է Ինձ մատնելու: Մարդու Որդին կգնա այս աշխարհից, ինչպես Նրա մասին գրված է, բայց վա՛յ այն մարդուն, ում ձեռքով կմատնվի մարդու Որդին: Ավելի լավ կլիներ նրա համար, եթե այդ մարդը ծնված չլիներ»: Հուդան, որ մատնելու էր նրան, պատասխանեց ու ասաց. «Միթե ե՞ս եմ, Վարդապե՛տ»: Նրան ասաց՝ դու ասացիր (Մատթ. ԻՁ 21-25)*: Իսկ Հովհաննես ավետարանիչն ավելացնում է. *«Եվ երբ նա պատառն առավ, սատանան մտավ նրա մեջ: Հիսուսը նրան ասաց. «Հիմա ինչ որ անելու ես, իսկույն արա՛» (Հովհ. ԺԳ 17)*:

Ուստի կարելի է ենթադրել, որ երբ Տեր Հիսուս Քրիստոսը Հաղորդության խորհրդի հաստատմանն անցավ, «նրանք դեռ ուտում էին», եւ Հուդան էլ արդեն «ձեռքը պնակի մեջ էր մտցրել»... Այստեղ շատ կարեւոր է այն պարագան, որ թեպետ Աստվածորդին, Իր վրա վերցնելով ողջ մարդկության մեղքը, դարձավ զոհաբերվող Գառը՝ ընկած մարդուն վերստին բարձրացնելու, եւ կրկին Աստծուն որդեգրելու, Աստծո արքայությանն արժանացնելու համար, սակայն մարդուն՝ որպես Իր արարչագործության զարդը, Իր պատկերով ու նմանությամբ ստեղծված արարածի, կրկին տվեց ընտրելու իրավունք: Եվ Հուդան՝ իբրեւ մարդկության մի հատվածը, կատարեց իր ընտրությունը:

*«Ավելի լավ կլիներ նրա համար, եթե այդ մարդը ծնված չլիներ»*. սա պահի ազդեցությամբ ասված խոսքեր չեն, այլ տիեզերական ահազանգ՝ ուղղված մեզ՝ բոլոր ժամանակներում ապրողներիս: Սա սթափության տիեզերական կոչ է, քանզի մարդուն փրկություն տանող ուրիշ ճանապարհ այլեւ տրված չէ...

Առաքյալների շարադրանքից երեւում է, որ Հաղորդության խորհուրդը հաստատվեց ընթրիքի վերջում, երբ Հուդան, հրեական զատկական ընթրիքն անելուց հետո, արդեն գնացել էր իր սեւ գործին...

Բնականաբար բաղարջներն արդեն սպառվել էին, եւ սեղանին միայն աֆիկոմանն էր մնացել: Ուստի, ամենայն հավանականությամբ, Տերը հենց աֆիկոման վերցրեց, օրհնեց, կտրեց եւ տվեց աշակերտներին ու ասաց. «Առե՛ք, կերե՛ք, այս է Իմ Մարմինը»: Ապա վերցրեց գավաթը, գոհություն հայտնեց, տվեց նրանց ու ասաց. *«Խմեցեք դրանից բոլորդ, որովհետեւ այդ է Նոր Ուխտի Իմ Արյունը, որ թափվում է վասն շատերի՝ իրենց մեղքերի թողության համար: Բայց ասում եմ ձեզ, այսուհետեւ Ես այլեւս որթատունկի բերքից չեմ խմի մինչեւ այն օրը, երբ ձեզ հետ կխմեմ նորը Իմ Հոր արքայության մեջ»* (Մատթ. ԻՁ 26-29):

Այստեղ կարող է հարց ծագել, թե ինչու առաքյալներից ոչ մեկը զոհաբերվող գառան մասին ոչինչ չի ակնարկում. չէ՞ որ զոհաբերված գառը զատկական սեղանի կարեւորագույն բաղադրիչներից մեկն էր, ստույգ ասելու դեպքում՝ ամենակարեւորը: Խորհրդավոր ընթրիքի տիեզերաշունչ, սակայն նաեւ մարդկայնորեն ամենահուզիչ պահն այն էր, որ այդ օրվա զոհաբերության սեղանի պատարագիչը հենց զոհաբերվող Գառն էր՝ մարդու Որդին, Ով որպես մարդ՝ կատարյալ էր եւ կատարելության մեջ՝ անկրկնելի, քանզի ծնվածներից միակն էր, որ զերծ էր ադամական մեղքից: Եվ քանի որ մարդու Որդի էր, ուստի օժտված էր մարդուն բնորոշ բոլոր հատկություններով՝ զգացողություններով, զգացումներով, հույզերով ու ապրումներով: Հիշենք ընթրիքից հետո Նրա՝ Ձիթենյաց լեռ բարձրանալը եւ վերջին աղոթքը, որի մասին գրում են բոլոր ավետարանիչները: Հիսուսը, ըստ Իր սովորության, գնաց Ձիթենյաց լեռը՝ աղոթելու: Նրա հետեւից գնացին եւ աշակերտները: *«Հոգիս տխուր է մահու չափ. այստե՛ղ մնացեք եւ ինձ հետ հսկեցե՛ք»* (Մատթ. ԻՁ 38): Հեռանալով նրանցից՝ ծնկեց մի քարի մոտ ու աղոթեց. *«Հա՛յր, եթե կամենում ես, այս բաժակը ինձնից հեռացրո՛ւ, բայց ոչ թե իմ կամքը, այլ Քո՛նը թող լինի»: Եվ նրան երկնքից երեւաց մի հրեշտակ եւ ուժ էր տալիս Նրան. Նա տագնապի մեջ էր եւ ամբողջ հոգով էր աղոթում: Եվ Նրանից քրտինքը հոսում էր արյան կաթիլների նման՝ շիթ-շիթ գետնին թափվելով»* (Ղուկ. ԻԲ 42-44): Սա նշանակում է, որ Նա մարդ ծնվածներից ոչ պակաս էր զգում այն սոսկալի տառապանքների ու ապրումների չափը, որ սպասվում էր Իրեն: Բայց գնում էր դրան, քանզի մարդու Որդին նաեւ Աստծո Որդին էր՝ Աստված, Ով **շատ սիրեց** մարդուն...

Շարունակենք Խորհրդավոր ընթրիքը:

Այսպիսով, խաչի վրա մահն ընդունելուց առաջ, մեր Տեր Հիսուս Քրիստոսը, մովսիսական ընթրիքի ծիսական բոլոր տարրերն օգտագործելով, Հին ստվերական Ուխտը փոխարինեց Նորով, նոր ծիսական արարողությամբ՝ Պատարագով: Որպես զոհաբերվող Գառ՝ Նա մորթվեց եւ Իր արյունով գնեց մեզ Աստծո համար (տե՛ս Հայտ. Ե 9):

*«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, եթե չուտեք մարդու Որդու Մարմինը եւ չըմպեք Նրա Արյունը, ձեր մեջ կյանք չեք ունենա: Ով ուտում է Իմ Մարմինը եւ ըմպում Իմ Արյունը, հավիտենական կյանք ունի. եւ Ես նրան վերջին օրը հարություն առնել պիտի տամ, քանի որ Իմ Մարմինը ճշմարիտ կերակուր է, եւ Իմ Արյունը՝ ճշմարիտ ըմպելիք: Ով ուտում է Իմ Մարմինը եւ ըմպում Իմ Արյունը, կբնակվի Իմ մեջ, եւ Ես՝ նրա մեջ»* (Հովհ. Զ 54):

Ուստի հարկ է, որ երկյուղով մոտենանք Տիրոջ խոսքերին, ուրախությամբ ու գնծությամբ ընդունենք մարդկության ողջ պատմության մեջ աննախադեպ ու սքանչելախորհուրդ այս հրավերը՝ Տիրոջ հետ Աստծո արքայության մեջ հավիտենական «ընթրիքին» մասնակցելուն: Հագնենք անկեղծ զղջումի եւ հնազանդության հոգեւոր մեր զգեստները եւ մեր հոգու «լվացված ոտքերով» մոտենանք այն Սեղանին, որտեղից խորհրդավոր Պատարագիչը մեզ հաղորդ է դարձնում Իր Մարմնին ու Արյանը՝ մեզ Իր հետ եւ Իրենով կյանք տալով: Մեր հոգում անթեղված ողջ սիրով ու նվիրումով, երախտագիտությամբ ու հավատարմությամբ ընդունենք տիեզերական Զոհաբերությունը, որ արվեց հանուն մեղավորներիս հոգու փրկության, հանուն մարդու հավիտենական կյանքի:

*Շարունակելի*

*Աստղիկ ՍՏԱՄԲՈԼՑՅԱՆ*

2012, ՄԱՐՏ Բ, ԹԻՎ 6 (362), ԷՋ 6

# ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱՐԳԵԼՔԸ ԱՍՈՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՕՐՈՔ ԵՎ ՆՐԱ ԱՆՎԱՆ ՇՈՒՐՋ ԵՂԱԾ ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ V ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

*Սկիզբը՝ թիվ 2-5*

Գրիգոր Լուսավորչին տրված «երիցս երանեալ» սրբազան մակդիրն առիթ է տվել նեստորական ասորի բարձրաստիճան կղերին՝ հայոց ազգային սրբին նվաստացնելու նպատակով մի Թուղթ հորինել եւ դնել՝ իբրեւ ընծայական, քարոզների մի գրքի հայերեն թարգմանության սկզբում: Գրքի վերնագիրն է «Գիրք որ կոչի Զգօն արարեալ Սրբոյն Յակոբայ երիցս երանեալ Հայրապետին Մըծբին քաղաքի՝ ըստ խնդրոյ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին, սակս մանկանց նորոյս սիովնի»: Հիշյալ ընծայականում, որ զարմանք հարուցող խնամքով պահպանվում է հայ մատենագրության մեջ արդեն գրեթե մեկուկես հազարամյակ, Գրիգոր Լուսավորիչը՝ իբրեւ անգետ աշակերտացու, դիմում է **երիցս երանեալ** Մծբնա Հակոբ հայրապետին՝ խնդրելով իրեն հասկացնել, թե ինչ է Քրիստոսի ուսմունքը, եւ որն է նրա հիմքը. «Բայց քեզ սիրելի իմ՝ հարց եւ խնդիրս ողջոյն ետու բերել, վասն կարօտութեան իմոյ՝ որ է ինձ առ ի քէն հարցանել խնդրուածոց իմոց, դու յինէն մի՛ արգելուցուս. վասն բազում ճառից գրգռեցին զիս խորհուրդք իմ, զի ուսուցից զքեզ, եւ բացցես դու ինձ զխորհուրդս խելաց իմաստութեան քոյ, ի միտ առնուլ քեզ զայս ամենայն, որ ինչ ես ի գրոց սրբոց հասու եղէ, զի պակասութիւն իմ քեւ լցցի. եւ քաղց իմ յագեալ լիցի ի վարդապետութենէ քումմէ, զի պարզու ծարաւոյ իմոյ՝ զովացի յաղբերէ վտակաց քոց...»:

«Բայց յառաջ քան զամենայն ինչ՝ որ կարի պիտոյ է ինձ գրեսցես, եւ խելամուտ արասցես զիս վասն հաւատոյ մերոյ, թէ զիա՞րդ իցէ, եւ ո՞ր է հիմն նորա. եւ ո՞րպէս շինուած շինի նա. եւ որպի՞սի իրոք հաստատի նա, եւ ո՞րպիսի գործք պիտոյ են նմա...»:

«Յայսմ ամենայնի եղբայր ես այսպէս հաւատացեալ եմ, աղաչեմ զքեզ, զի գրեսցես, եւ խելամուտ արասցես զիս՝ թէ ո՞րպիսի գործ պիտոյ է այսմ հաւատոյ մերոյ, եւ հանգուսցես զիս» *(«Գիրք որ կոչի Զգօն ....», Կոստանդնուպոլիս, 1824, էջ 3-4)*:

Այս ընդամենը երկու տող դիմումը, որ ընդարձակվել է Հակոբ Մծբնացուն ուղղված հաճոյախոսությամբ եւ միտումնավոր կրկնվող ինքնանվաստացման խնդրվածքներով - խնդրանք՝ իրեն խելամուտ անելու, խնդրանք՝ խնդիրքը չարգելելու մասին, որոնք ուղեկցվում են սեփական պակասամտության հավաստիացումներով, իմ կարծիքով՝ կապված են 430-ական թթ. Հայաստանում իշխած ասորի կաթողիկոսների հետ: Իսկ որ դա այդպես է, հաստատվում է նրանով, որ Հակոբ Մծբնացուն «զգօն պարսիկ» է անվանում նաեւ Փավստոս Բուզանդը Հայոց Պատմության սկզբում. «Զայնու ժամանակաւ խաղաց գնաց մեծ եպիսկոպոսն մծբնացւոց, այր սքանչելի ծերունի, վաստակաւոր ի գործս ճշմարտութեան, որում անուն Յակոբ, փոխանակ ազգաւն պարսիկ կոչէր, այր ընտրեալ յաստուծոյ» *(Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց. Գ, Ժ, էջ 36)*: «Ազգաւն պարսիկ» պետք է ուղղել պարզապես «զգաւն պարսիկ», որ նշանակում է «իմաստուն պարսիկ»: Սողոմոն Իմաստունին վերագրվող Հին Կտակարանի «Իմաստութիւն» գիրքը Կյուրեղ Երուսաղեմացու «Կոչումն ընծայութեան» ճառում կոչված է «Զգօնութիւն»:

XIX դ. վերջին գերմանացի ասորագետ Բերտի եւ այլոց ջանքերով պարզվեց, որ Հակոբ Մծբնացուն ընծայված քարոզների գրքի իսկական հեղինակն է Ափրաատ կամ Ֆարհադ անունով մի պարսիկ իմաստուն (Խաքիմա Ֆարսայա), որը վախճանվել է 320-ական թթ., իսկ Հակոբ Մծբնացին կյանքում ոչ մի տող չի գրել:

Ե. Տեր-Մինասյանը, որի գրչին է պատկանում Հայ եւ Ասորական եկեղեցիների հարաբերություններին վերաբերող արժեքավոր ուսումնասիրությունը, կարծիք է հայտնում, թե «դիմողը եղել է, անշուշտ, Գրիգոր անունը կրող մի հոգեւորական, բայց առաջին սխալին՝ գրվածքը Մծբինի եպիսկոպոսին վերագրելուն, անմիջապես հետեւել է երկրորդը՝ Գրիգորը դարձել է Գրիգոր Լուսավորիչ, որով մոտավորապես ժամանակակից երկու նշանավոր գործիչների անունները կապվել են միմյանց հետ» *(Ե. Տեր-Մինասյան. Պատմա-բանասիրական հետազոտություններ, ԳԱ հրատ., 1971, նաեւ նույնի՝ Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները Ասորոց Եկեղեցիների հետ, Էջմիածին, 1908, էջ 122-133)*: Քրիստոնեական վարդապետության հմուտ գիտակը եւ հայ մատենագրության խոշոր մասնագետը այս հարցում շատ մեղմ բացատրություն է տալիս - որեւէ հայ գրիչ, առավել եւս՝ խմբագիր, ոմն Գրիգորի պատահական չէր շնորհի **Սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի** բարձր մակդիրները մի ընծայական Թղթի համար, որի մեջ միտումնավոր նվաստացվում է նույն այդ տիտղոսների կրողը, քանի որ իր Թղթում դիմողը Հակոբ Մծբնացուն խնդրում է **իրեն խելք սովորեցնել մեր հավատի մասին, թե ինչպիսի՞ն է եւ ո՞րն է նրա հիմքը** - այսպիսի նվաստացուցիչ խնդիրքը նախատեսված չէ «երկու **նշանավոր ժամանակակից գործիչների** իրար կապելու համար»: Ոմն Գրիգորն այստեղ ներկայացված է իբրեւ մի անգետ աշակերտացու **երիցս երանեալ** Հակոբ հայրապետի համեմատ, որի անունը քաջ ծանոթ էր հայերին: Պարսիկ իմաստունն իր Քարոզները գրել է Եկեղեցու ժողովի խնդրանքով, ինչպես նշված է մի քանի քարոզների վերնագրում: Ուստի ակնհայտ է, որ պարսիկ զգոնի (իմաստունի) Քարոզների գիրքը հայերեն թարգմանելիս աղավաղել են՝ հայոց ազգային սրբին իբրեւ թերուս վարկաբեկելու համար, եթե ավելին չասենք: Նեստորական բարձրաստիճան կղերի ցուցումով գրքի սկզբին կցվել է Գրիգոր Լուսավորչի անունով հերյուրված վերոհիշյալ նվաստացուցիչ Թուղթը: Այս կեղծիքն արվել է, ինչպես ասվեց, 430-ական թթ., երբ ասորի կղերը Հայաստանում հատուկ արշավ էր սկսել Գրիգոր Լուսավորչի պաշտամունքը վերացնելու նպատակով:

Ես մի առիթով ուշադրություն եմ հրավիրել այն փաստի վրա, թե ինչպես 320-ական թթ., երբ սբ Գրիգորը, հեռանալով Հայոց արքունիքից, աշխարհից մեկուսանալու նպատակով գնաց ճգնելու իր հիմնած Գլակավանքից վերեւ գտնվող Ավետյաց Բլրի վրա, հազիվ չորս ամիս անց վանքի ասորի ազդեցիկ վերակացուները, որոնց սբ Գրիգորն ինքն էր հետը բերել Կապադովկիայից, արգելեցին նրան այլեւս մնալ Ավետյաց Բլրի վրա՝ իբր մարդկանցից հույժ չպաշտվելու պատճառով եւ նրան պատվավոր կերպով արտաքսեցին այդ տեղից, որ գնա հեռավոր Մանյա Այրքում ճգնելու անհայտության մեջ, քանի որ այդպիսի մեծ սրբին վայել չէ մարդկանց աչքին երեւալ:



Չնայած Հայաստանը հրաշագործ բժշկությամբ եւ վարդապետությամբ լուսավորելու Գրիգոր Լուսավորչի առաքելական գործունեությանը եւ հրեշտականման վարքին, քրմական տներից ելած եպիսկոպոսների մի մասը դեռեւս կասկածանքով էր վերաբերում նրան այն պատճառով, որ Կեսարիայում կրթված, ապա ձեռնադրված լինելով՝ նրան համարում էին «հունադավան կապադովկացի», որն այնտեղից օտար հավատի հետ օտար քարոզիչներ բերելով՝ օտարված էր թվում հայկական միջավայրից: Մինչդեռ, հենց Գրիգոր Լուսավորչի «Վարդապետության» մեջ բազմաթիվ վկայություններ ենք գտնում այն մասին, որ Քրիստոսի Ավետարանը պետք է քարոզվի յուրաքանչյուր ազգի լեզվով եւ, հատկապես, շեշտվում է Հին եւ Նոր Կտակարանները հայաբարբառ, հայերենախոս քարոզելու նպատակը:

Սբ Գրիգորի «Վարդապետության» մեջ հիմնավորվում է այն գաղափարը, թե Բաբելոնյան աշտարակի կործանումից հետո, երբ Աստված միալեզու ազգը բաժանեց յոթանասուներկու լեզուների եւ այդ ազգերն իրենց յոթանասուներկու նահապետներով սփռեց աշխարհով մեկ՝ բնակվելու իրենց համար որոշված սահմաններում («579), դրա համար էլ Քրիստոսը յոթանասուներկու առաքյալ ուղարկեց նույն թվով ազգերին քարոզելու Իր Ավետարանը՝ յուրաքանչյուրին իր լեզվով (Ագաթ. §612, 685-686):

*Շարունակությունը՝ էջ 7*

# ԼԻՆԵՆՔ ՄԱՍՆԱԿԻՑԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ

*Սկիզբը՝ էջ 5*

Մենք՝ քրիստոնյաներս, սրտով պետք է փնտրենք միայն մի ճշմարտություն, դա այն ճանապարհն է, որ նշեց Աստծու Որդին՝ Հիսուսը, եւ ասաց. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը եւ կյանքը»: Որեւէ որոնում այլ ճանապարհի, կարող է հասցնել մի փակուղու, որն ուղենիշ չունի: Մեր հոգին խռովքի մեջ պահող, բարոյական տկարությունների աշխարհն այսօր տագնապի մեջ է, պատերազմների, սպառնալիքների, նյութական եւ հոգեկան ճգնաժամի մեջ: Առանց Քրիստոսի ճշմարիտ խաղաղության չկա խաղաղություն. սին խոստումներով, ռազմական հզորությամբ կամ ուժի գերիշխանությամբ է պահվում աշխարհի թվացյալ խաղաղությունը: Մեր ժամանակի մարդը, որ քաջատեղյակ է աշխարհի ամենահեռավոր անկյունում կատարվող իրադարձություններին, ինքն իրեն զգում է խղճուկ, անազատ, անպաշտպան անձ: Թեեւ հպարտանում ենք, որ «բարձր կենսամակարդակով» բավարարում ենք մեր կենցաղային պահանջները, շողշողուն սարքավորումներով, փարթամ սննդամ-



թերքներով ենք սնվում, բայց այս շռայլությամբ հանդերձ՝ սննդամթերքների ավելցուկների աղբանոցների մեջ որոնող շների կողքին տեսնում ենք, որ նաեւ մարդիկ են հայտնվում, որոշ երկրներում նույնիսկ միլիոնավոր երեխաներ սովամահ են լինում: Այս ամենն ինչպես կարող է ուրախացնել մարդ կոչվածին, ինչ բավարարության զգացում կարող է հաղորդել նրան, որ դադարեցնի իր հոգու փնտրտուքը: Միանգամայն պարզ է՝ որքան էլ հաջողություններ ունենանք, որքան էլ նվաճենք տիեզերքը՝ գիտության ամենօրյա ձեռքբերումներով, միեւնույն է, այն չի կարող լցնել հոգու դատարկությունը, կասեցնել մարդու անզորության, միայնության, վախի, ատելության, այլասերվածության սպառնացող վտանգը: Հոգին մահացու սպառնալիքներից ազատելու ճանապարհը մնում է փակ, փառքի եւ հաջողության, վայելքի եւ դիրքի ունայնության գիտակցությունը ժամանակի հետ խորանում: Միայն բարի եւ աստվածահաճո գործերով, մեր խոնարհ եւ ազնիվ, լուռ ու աննկատ, առանց սին հավակնությունների ընթացող մեր կյանքը՝ Քրիստոսով, կարող է մեզ հնարավորություն տալ ներդաշնակորեն կառուցվելու որպես Աստծու բնակարան՝ Սբ Հոգով:

Մեծ պահոց շրջանի աղոթքները, շարականները, քարոզներն ու պահեցողության կանոնները առաջնորդում են մեզ հոգու հզորացման ցանկալի վիճակի, իսկ ապաշխարությամբ, խոստովանությամբ եւ հաղորդությամբ՝ հոգու փրկության: Հայ հավատացյալն իր դարավոր ավանդություններով միշտ էլ իր հոգեւոր, բարոյական ծառայությամբ եւ նվիրվածությամբ արժանի մասնակիցն է եղել Եկեղեցու փրկագործության առաքելության եւ հավատարիմ մնալով իր դավանությանը՝ մերժել է մոլորեցնող հոսանքներն ու ազդեցությունները: Մեր Եկեղեցու՝ հոգեւոր արթնության կոչերն իր հավատացյալներին առաջնորդում են պատրաստ լինել դիմավորելու արժանավորապես Քրիստոսի հրաշափառ Հարության տոնը, Նրա լույս գերեզմանից լույս մատակարարելու մեր հոգիներին եւ ջերմացնելու մեր կյանքը, խաղաղեցնելու մեր խռովյալ հոգիները, մահաբեր փակուղուց դուրս գալու ճանապարհները: «Ես եմ ճանապարհը եւ կյանքը»,- այսօր էլ հստակ լսվում է Քրիստոսի ձայնը, եւ ով լսում է Նրա ձայնը եւ հավատքով հետեւում Նրա պատվիրաններին, նա արժանի մասնակիցն է լինում Նրա հրաշափառ Հարության:

Քրիստոս հարյավ ի մեռելոց, ձեզ եւ մեզ մեծ ավետիս:

Օրհնյալ է Հարությունը Քրիստոսի:

*Արսեն արք. ԲԵՐԲԵՐՅԱՆ*

# ԳՈՂԳՈԹԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

*Սկիզբը՝ էջ 4*

Աշխարհի Փրկիչը մերժեց ըմպել նույնիսկ մահապարտների համար պատրաստված՝ զմուռսով խառնված գինին, որը զգայարանները թմրեցնելու եւ չարչարանքները մեղմելու համար էր մատուցվում, սակայն չկամեցավ այդպիսի արհեստական միջոցներով Իր չարչարանքների սաստկությունը թեթեւացնել, այլ մտքի կատարյալ պարզությամբ եւ կամքի պատրաստակամությամբ էր ուզում չարչարանքների ու մահվան դառը բաժակը խմել: Խելագար ու ատելությունից կուրացած ամբոխը, սակայն, չէր հանդարտվում՝ ծիծաղելով, նախատինքներով ու հայհոյություններով առավել խոցելով խոշտանգված Քրիստոսին: Արդեն մոռացվել էին այնչափ հրաշքները, անթիվ բժշկությունները, անհամար բարիքները: Իսկ Նա՞: Խաչի վրա գամված, ջղաձգումից թուլացած ու կքված, կարծես Ինքն Իրեն մոռացած, աղոթում էր Իր թշնամիների, չարչարողների, սպանողների համար: Ըստ եկեղեցական հայրերի՝ Եդեմի պարտեզում նախաստեղծների կատարած ամեն մի մեղանչման դիմաց մեր Տերը Իր տնօրինությամբ համապատասխան փրկչական գործողությունը կատարեց, քանզի «քրտնելով, փշե պսակ կրելով, զինվորների թուքը հանդուրժելով, ոտքերը եւ ձեռքերը կապված, լեղին ճաշակելով, գլխի խոնարհմամբ, կողի խոցվածքով եւ մնացյալ ամեն ինչով բուժում էր նախաստեղծների ախտերը» (սբ Գր. Տաթեւացի, «Քարոզ խաչի»): Ինչպես օրվա շարականում է ասվում, «Ադամը, խախտելով պատվիրանը, ձեռքը մեկնեց դրախտի ծառին, իսկ Քրիստոսը ձեռքերով բեւեռվեց խաչափայտին, եւ Ադամի կերած պտուղի փոխարեն լեղի խմեց...»: Քրիստոսն այս բոլոր չարչարանքները հանձն առավ եւ խաչափայտի վրա Հոգին ավանդեց՝ մարդկության փրկության համար:

Նույնիսկ անշունչ արարածները չկարողացան տանել Անմահի մահը՝ սգալով ու ողբալով Նրա համար, քանզի Նրա հետ միասին չարչարվում էր ողջ բնությունը: Երբ Հիսուսն Իր Հոգին ավանդեց, արեգակն անմիջապես խավարեց՝ թաքցնելով իր լույսը, որպեսզի չտեսնի փառքերի Թագավորին՝ խաչին գամված: Երկնային մեծ լուսատուն լույսն իր մեջ ամփոփեց եւ երեք ժամ խավարի մեջ մնալուց հետո կրկին լուսավորեց, որպեսզի քարոզի ողջ երկրով ու երկնքով մեկ, թե երրորդ օրը իր Արարիչը դարձյալ ծագելու է դժոխքից եւ հարություն է առնելու մեռելներից: Բնությունն աղաղակեց, որ արդար ու անմեղ է Նա, Ում անարգ մահվամբ սպանեցին եւ դասեցին ավազակների շարքը: Հիսուսի մահվամբ Հին Ուխտը խախտվեց ու կործանվեց, եւ Նոր Ուխտի դռները բացվեցին...

Գողգոթայի բարձունքում Քրիստոսը կատարեց մարդկության փրկագործության վեհ ու սքանչելի խորհուրդը. կատարվեց այն, ինչ նախասահմանված էր հավիտյաններից առաջ, եւ կանխատեսել էին մարգարեները: Աստվածորդին Իր փրկագործ չարչարանքներով ու խաչի անարգ մահվամբ հաղթեց մահվանը՝ երրորդ օրը հրաշափառապես հարություն առնելով մեռելներից: Նա փարատեց գերեզմանի ու մահվան խավարը եւ մխիթարեց թախծյալ մարդկությանը: Քանզի երբ մարմնով դրվեց գերեզմանում, Հոգով իջավ դժոխք, փշրեց նրա դռները, կապեց սատանայի հրեղեն շղթաներով եւ ազատեց բանտված հոգիներին: Սբ Գր. Տաթեւացին ասում է. «Մեր Տիրոջ եւ Փրկչի գերագույն հաղթանակը կայանում է նրանում, որ լինելով խաչին գամված՝ արձակում էր կապվածներին, եւ մեռած՝ մեռյալներին հարություն էր տալիս, Իր մահով խափանում էր մահը եւ գերեզման իջնելով՝ մեզ երկինք բարձրացնում» («Քարոզ Խաչի»): Խաչի վրա հեղած Իր արդար ու սուրբ արյամբ ջնջեց անեծքը, որը մեր նախահոր՝ Ադամի պատվիրանազանցության պատճառով ծանրացել էր ողջ մարդկության վրա: Քրիստոսի փրկագործությամբ մարդկությունը հաշտվեց Աստծու հետ՝ արժանանալով որդիության բարձրագույն պատվին (տե՛ս Հռոմ. Ը 16, 17): Քրիստոսի զոհագործությամբ մարդը հավատքով արդարանալու եւ երկնքի արքայության ժառանգորդը լինելու երանելի շնորհին արժանացավ, իսկ խաչն անարգանքի գործիքից վերածվեց զորության նշանի, քանզի խաչի զոհասեղանի վրա պատարագվեց Աստծո Գառը՝ քավելով մարդկության մեղքը:

Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցին Քրիստոսի չարչարանքների հիշատակությունները սրբագործել է պատշաճ արարողակարգով: Ամեն տարի՝ Ավագ հինգշաբթի երեկոյան եւ Ավագ ուրբաթ օրը, բոլոր եկեղեցիներում կատարվում է Քրիստոս Աստծո սոսկալի չարչարանքների եւ խաչելության հիշատակությունը: Եվ յուրաքանչյուր քրիստոնյա, մասնակից լինելով այդ կարգին, իր Փրկչի հետ խորհրդավոր կերպով քայլ առ քայլ անցնում է խաչելության ու չարչարանքների ճանապարհը՝ տառապելով Նրա հետ ու ամաչելով ու սոսկալով մարդ արարածի գործածի համար: Սակայն չարչարանքների, խաչելության ու մահվան տխրազգաց հիշատակներին հաջորդում են հարության, կյանքի ու փրկության ուրախալի հիշատակումները:




Գնահատենք ու արժեւորենք տիեզերական պատմության ամենանշանակալի իրադարձությունը՝ Գողգոթայի հաղթանակը, հաղթանակ, որը մեզ ուժ եւ կարողություն է շնորհում՝ կյանքում քաջությամբ եւ Քրիստոսի օրինակով ոտք դնելու արդեն մեր Գեթսեմանիի պարտեզ եւ բարձրանալու մեր Գողգոթան, քանզի առանց խաչելության չկան հարություն եւ կյանք... Խաչվենք Քրիստոսի հետ, որպեսզի Նրա հետ էլ վայելենք հաղթական փառքը երկնքում: Գողգոթայի հաղթանակը յուրաքանչյուր քրիստոնյայի հաղթանակն է. արժեւորենք այն՝ մեր աչքի առջեւ մշտապես ունենալով մեր Փրկչի՝ մեզ համար կրած փրկագործ չարչարանքները, կենսատու խաչելությունը, երեքօրյա թաղումը, երանելի հարությունը, աստվածապես համբարձումը եւ նստելը Հոր աջ կողմում, եւ խոստովանենք ու օրհնենք Նրա ահավոր եւ փառավորյալ մյուս գալուստը:

*Անժելա ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱՐԳԵԼՔԸ ԱՍՈՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՕՐՈՔ...



*Սկիզբը՝ էջ 6*

Իսկ այդ յոթանասուներկու առաքյալները այդչափ լեզուներին գիտակ էին դարձել Երուսաղեմի վերնատանը կատարված Պենտեկոստեի հրաշքով, երբ վերեւից առաքյալների վրա իջան կրակի լեզուներ, եւ նրանք սկսեցին խոսել տարբեր լեզուներով (Ագաթ. §499) *(տե՛ս Գործք առաքելոց, Բ, 3-4)*: Հայոց ազգն էլ, Աստծո սահմանադրության համաձայն (Ագաթ. §297, 321), Հայկ նահապետի հետ, որ մեկն էր յոթանասուներկու նահապետներից, բնակվեց իրեն հատկացված Հայոց Լեռնաշխարհում, ուստի հայերին եւս պետք է Քրիստոսի ուսմունքը քարոզվեր իրեն տրված հայոց լեզվով. «Ինչպես Մովսես մարգարեն եբրայերեն էր օրենքը սովորեցնում իր ժողովրդին, իսկ Առաքյալների Գունդը բազում լեզուներով էր քարոզում Քրիստոսի Ավետարանը, այդպես էլ սուրբ Գրիգորը (Հայաստան) եկավ՝ Մովսեսի օրենքը եւ Քրիստոսի Ավետարանը հայաբարբառ եւ հայերենախոս դարձնելու» (հմմտ. Ագաթ. §854):

Ուստի Կապադովկիայից ասորի եւ հույն վարդապետներ բերելով՝ սբ Գրիգորը բնավ նպատակ չուներ նրանց լեզուներով ուսուցանել Քրիստոսի Ավետարանը - քանզի օտար հավատը օտար լեզվով չեն քարոզում, այլ ցանկանում էր «Հայոց երկրում ասորի եւ հելլեն դպրոցներ բացելով՝ տարբեր գավառներից բերած մատաղ մանուկներին հաղորդակից անել դպրության արվեստին՝ հմուտ ուսուցիչների ձեռքի տակ. մանավանդ պղծագործ քրմերին ու նրանց որդիներին դաս-դաս խմբել հարմարավետ տեղերում եւ ապրուստի թոշակ նշանակել» (Ագաթ. §840): Սրանով նա հույս ուներ ոչ միայն նրանց հեղինակությամբ ամրապնդել նոր հավատը լայն խավերի մեջ, այլ, առհասարակ, այդ լեզուների այնպիսի կատարյալ թարգմանիչներ պատրաստել, որ նրանք եկեղեցիների բեմից, հունարեն եւ ասորերեն բնագրերին նայելով, միանգամից Սուրբ Գիրքը կարդային հայերեն: Սակայն ասորի հոգեւորականները, որոնց Գրիգոր Լուսավորիչը ինքն էր իր հետ բերել Սեբաստիայի կողմերից (Փոքր Հայքից), սկսեցին հետզհետե բացահայտ արհամարհանք տածել տեղաբնիկ ժողովրդին: Նրանք գիր եւ Ավետարան ունեին եւ գերակա դիրք էին գրավում նորաստեղծ հայ եկեղեցիներում եւ վանքերում, հատկապես Իննակնյան վանքում, որ վանահայր Զենոբ Գլակի անունով կոչվեց Գլակավանք: Նրանք բարձրամիտ վերաբերմունքով նվաստացնում էին տեղի քրիստոնյա եւ դեռեւս հեթանոս համայնքները, ինչպես եւ նրանց շատ թե քիչ ազդեցիկ ներկայացուցիչներին: Այդ արհամարհանքը յուրովի արտահայտվել է եւ Փավստոսի «Հայոց պատմության» մեջ. «Միայն քչերը, որոնք փոքրիշատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտության, մասամբ հասկանում էին այդ (կրոնը): Իսկ որոնք գրագիտության արվեստից զուրկ էին, այսինքն ժողովրդի՝ նախարարների ու շինականների խառնիճաղանջ բազմությունը - եթե ուսուցիչները նստելով գիշեր-ցերեկ ամպերի նման ուսումը ինչպես հորդ անձրեւ նրանց վրա հոսեցնեին, նրանցից ոչ մեկը ոչ մի խոսք, ոչ կես խոսք, ոչ մի բան, ոչ մի նշույլ իրենց լամծներից չէին կարող մտքում պահել կամ հասկանալ» *(Բուզ., Գ, ԺԳ, էջ 91)*: Գրիգոր քահանայապետը զգում էր, որ օտարներին տածած հակակրանքը հետզհետե դառնում էր եւ իր դեմ՝ իր բարեմիտ գործողությունների եւ օտարալեզու քրիստոնյա գործիչներին վստահելու պատճառով: Ամենախոնարհ հավատը քարոզող օտարալեզու կրոնավորների մեծամտությունն ու փառասիրությունը անսպասելի էր Գրիգոր քահանայապետի համար, եւ նորադարձ հավատացյալ հոտը չպառակտելու համար՝ նա որոշեց ճգնելու անվան տակ հեռանալ Վաղարշապատի արքունիքից եւ մեկուսանալ սակավաբնակ վայրերում՝ իր փոխարեն դրան (արքունի) եպիսկոպոս կարգելով Մամիկոնյանների սպարապետական տոհմին պատկանող Տարոնի եւ Տայքի եպիսկոպոս Աղբիոսին *(այսպես է նշված բելգիացի հայագետ Ժերար Գարիտի հայտնաբերած եւ հրատարակած հունարեն Վարքում (G. Garitte, Documents pour l'étude du livre d'Agathange, Citta del Vaticano, MCMXLVI (1946), §191: Հայերեն Ագաթանգեղոսի Պատմության մեջ ձեռագրերն ու տպագիրները այստեղ՝ §846-ում, «Աղբիոս»-ի փոխարեն ունեն «Աղբիանոս»: Ըստ հայերեն Ագաթանգեղոսի՝ սբ Գրիգորն Աղբիանոսին է թողել արքունի վերակացու. «Եւ զԱղբիանոս զայր ճշմարիտ եւ աստուածասէր՝ վերակացու թողոյր արքունական դրան բանակին: Եւ ինքն ընդ ժամանակս ժամանակս յանապատ լերինս ելանէր, ուր եւ ինքեան իւրով անձամբն իսկ օրինակ ցուցանէր»: Իրականում Աղբիանոս եպիսկոպոսը վերակացու էր նշանակված Եփրատ գետի կողմերում (§845), իսկ հետո ժառանգություն ստացավ նաեւ Մանավազակերտ (Մանազկերտ) ավանը եւ նրա շրջակա գավառակը՝ նույնպես Եփրատ գետի կողմերում (Բուզ., Գ, Դ): Աղբիանոսը նախկինում քուրմ էր եղել, եւ նրա տոհմը մի անգամ չէ, որ հետագայում հակառակորդ կաթողիկոսներ է տվել Հայ Եկեղեցու աթոռին, ինչպես ճիշտ նկատել է Ն. Ադոնցը: Այնպես որ հայերեն Ագաթանգեղոսում եղած «այր ճշմարիտ եւ աստվածասեր» բնորոշումը վերաբերում է ոչ թե Աղբիանոսին, այլ Աղբիոսին:*

*Հունարեն Վարքն օգնում է հայերեն Ագաթանգեղոսում Աղբիանոս եպիսկոպոսի փոխարեն վերականգնելու սկզբնապես եղած Մամիկոնյան տան եպիսկոպոս Աղբիոսի անունը (§173). «Սուրբ Գրիգորը ամեն ինչ կատարելուց եւ բոլորին քրիստոնեական հավատքի մեջ ամրապնդելուց հետո, Սրբազան Աղբիոսին թողեց իրեն պատկանող վայրում տեղապահելու (ճիշտ կլիներ՝ իրեն տեղապահ նշանակեց - Ա. Մ.), իսկ ինքը ամբողջ երկրով մեկ եպիսկոպոսներ էր հաստատում, շարունակ հսկում եւ ամրապնդում նրանց, որից հետո նա բնակվեց Դարանաղյաց գավառի Մանյա Այրք կոչված քարայրում, իրեն նվիրելով աղոթքների, պաղատման եւ պասի» (Ագաթանգեղոսի պատմության հունական նորահայտ խմբագրությունը (Վարք), թարգմ. հունարեն բնագրից՝ Հ. Բարթիկյանի, առաջաբան եւ ծանոթ.՝ Ա. Տեր-Ղեւոնդյանի, «Էջմիածին», 1966), որը հավատարիմ էր թե՛ սպարապետին եւ թե՛ Տրդատ թագավորին (ըստ հունարեն Վարքի (§172)՝ սբ Գրիգորը, Աղբիոսին եպիսկոպոս նշանակելով, «ուղարկեց սպարապետական տունը, որը պատկանում էր Մամիկոնյանների տոհմին: Սրանք իրենց նախարարի՝ մեծ զորավարի եւ սպարապետի հետ միասին միշտ թագավորի հետ էին, դրա համար էլ Ս. Գրիգորը հրամայեց, որ Աղբիոսը միշտ թագավորի մոտ լինի եւ իր (Գրիգորի) տեղը գրավի մշտական քարոզչության եւ վարդապետության [ժամանակ]. կրթություն էր ստացել եւ քաջածանոթ էր Աստվածաշունչ գրքերին: Նա Տարոնի եւ Տայքի եպիսկոպոսն էր» - նույն տեղում, էջ 85):*

Ապա դավանաբանական պատրվակով հասան այն բանին, որ քանի դեռ աստվածային տեսիլքով չեն հայտնվել Գրիգոր Լուսավորչի նշխարները, պետք է դադարեցնել նրա պաշտամունքը եւ արգելել նրան փառաբանող Ագաթանգեղոսի Պատմությունը: Սրանով պետք է բացատրել, որ 440-ից մինչեւ 475 թվականը հանդես եկած հայ մատենագիրների եւ պատմիչների (Եզնիկ Կողբացի, Կորյուն, Եղիշե եւ այլք) երկերում չի հիշատակվում Գրիգոր Լուսավորչի անունը, չնայած որ նրանք բոլորն էլ իրենց երկերում առատորեն օգտվել են Ագաթանգեղոսի Պատմության շարադրանքից եւ ոճերից:

*Շարունակելի*

*Ալբերտ ՄՈՒՇԵՂՅԱՆ*
*Բանասիրական գիտ. դոկտոր*

# ՄԵՐ ՄԵՋ ՓՆՏՐԵՆՔ ԱՍՏԾՈ ԱՐՔԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Մարտի 17-ին Հայ Առաքելական Եկեղեցին նշեց Սուրբ քառասուն մանկանց հիշատակության օրը: Այդ առիթով Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Քարոզչական կենտրոնը, Թովմա աբեղա Խաչատրյանի առաջնորդությամբ, կազմակերպել էր ուխտագնացություն՝ դեպի Աբովյանի Սբ Ստեփանոս եկեղեցի: Առավոտյան Մայր Աթոռ Սբ Էջմիածնում կատարվեց ուխտավորների օրհնության կարգ, իսկ ուխտատեղիում մատուցվեց Պատարագ:



40 մանկահասակ վկաները Փոքր Հայքի տարբեր քաղաքներից էին եւ ծառայության մեջ էին Սեբաստիա քաղաքում: Լիկիանոս կայսեր հրամանով Կեսարիայի դուքս Լյուսիասը հարցաքննություն է անցկացնում՝ բանակում քրիստոնյա զինվորներին հայտնաբերելու նպատակով: Հավատարիմ իրենց սուրբ հավատքին՝ նրանք անվեհեր բարձրաձայնում են իրենց քրիստոնյա լինելը եւ դատավորների զայրույթն առաջացնելով՝ բանտարկվում: Ձմեռային մի ցուրտ գիշեր նրանց նետում են Սեբաստիայի մոտ գտնվող լիճը: Վկաներից միայն մեկը չի կարողանում դիմանալ տանջանքներին: Սառցակալած ջրից դուրս ելնելով՝ նա փորձում է փրկություն գտնել լճափին կառուցված տանը, սակայն, կնքելով մահկանացուն, զրկվում է ե՛ւ երկրային, ե՛ւ երկնային կյանքից: Լուսադեմին մյուս բոլոր նահատակները երեւում են՝ լուսե պսակներով զարդարված: Պահապան զինվորներից մեկը, տեսնելով այդ հրաշքը, լցվում է Քրիստոսի հավատով եւ նետվելով լիճը՝ դառնում է նրանց պսակակիցը:

Այս պատմությունը մեզ քարոզում է կյանքի բոլոր դժվարությունների մեջ հավատարիմ մնալ Քրիստոսին, Տիրոջ սուրբ հավատքին, հաղթահարել խոչընդոտները՝ երկնային արքայության ու պսակին արժանանալու համար:

Իհակե, անչափ դժվար է աշխարհիկ նեղությունների, հալածանքների դեմ պայքարելը, չխոնարհվելն ու չհուսահատվելը: Որքա՜ն հաճախ ենք մենք, խոչընդոտների հանդիպելով, վհատվում՝ մտածելով, թե Աստված մոռացել է մեզ, բայց հիշենք, որ Տերը միշտ մեզ՝ Իր զավակների հետ է՝ հոգատար ծնողի պես, իսկ այն, ինչ պատահում է, կարող է հետեւանք լինել մեր սխալ ընթացքի, աստվածուրացության: Ուրանում ենք եւ այն ժամանակ, երբ ոչ խոսքերով, այլ գործերով ենք շեղվում Քրիստոսին հետեւելու ճանապարհից: Փորձենք ապրել արդար, ճշմարիտ կյանքով ու Տիրոջ պատվիրաններով, ճիշտ գնահատել Աստծուն եւ Նրա տված շնորհները, պարգեւներն ու բարիքները:

Կողմնացույցը ցանկացած տեղում ցույց է տալիս ճիշտ ճանապարհը, նույնպես եւ արդարը, որտեղ էլ լինի, պաշտում է իր Աստծուն, ապրում Նրա խոսքով՝ ե՛ւ ուրախության, ե՛ւ հալածանքի, ե՛ւ նյութական ծանր վիճակի մեջ, նա միշտ ճիշտ ճանապարհի վրա է, մարդկանց եւս ուղղորդում է դեպի այն, գոտեպնդում հավատքի մեջ, աղոթում նրանց համար»,- ասաց հայր սուրբը:

Հավատքի ճանապարհը դժվար է, քարոտ, փշոտ ու նեղ: Բայց չէ՞ որ Տերը մեզ տալիս է կենարար հույսը. «Եթե Իմ պատվիրանները պահեք, Իմ սիրո մեջ կմնաք. ինչպես Ես Իմ Հոր պատվիրանները պահեցի եւ մնում եմ Նրա սիրո մեջ» (Հովհ. ԺԵ 10-11): «Դուք Իմ բարեկամներն եք, եթե անեք այն, ինչ որ Ես եմ պատվիրում Ձեզ» (Հովհ. ԺԵ 14-15):

Տերը մեզ պատվիրում է օգնական ու աջակից լինել մերձավորներին, սիրել միմյանց՝ աստվածային, մենչեւ վերջ ներող ու կարեկից սիրով: Հայր Թովման պատմում է. «Մի մարդ խնդրում է Աստծուն՝ ցույց տալ իրեն դժոխքը: Այստեղ նա տեսնում է սեղան, մեծ կաթսա՝ ապուրով, եւ մարդիկ, ովքեր, սակայն, չէին կարողանում օգտվել ապուրից, քանի որ նրանց շերեփներն անչափ երկար էին: Հետո Տերը նրան ցույց է տալիս դրախտը: Այստեղ եւս նույն պատկերն է, միայն թե մարդիկ կարողանում էին ճաշակել, քանի որ երկար շերեփներով կերակրում էին իրար:՞ Այս առակը ցույց է տալիս, որ միմյանց օգնելով ու սատարելով՝ կարող ենք հաղթահարել ամեն դժվարություն:

40 զինվորներից մեկը տկարացավ հավատքի մեջ եւ չկարողացավ տեսնել ծովերի ալիքների վրայով քայլող Քրիստոսին: Նույնպես եւ մենք, մխրճվելով մեղքերի հորձանուտում, խավարում, անկարող ենք լինում հաղորդ դառնալու աստվածային լույսին: «Մենք հաճախ, իբրեւ քրիստոնյաներ, դատում ենք իրար, սակայն հիշենք Տիրոջ՝ Պետրոս առաքյալին տված պատասխանը, ով Նրան հարցրեց, թե ինչ է լինելու Հովհաննես առաքյալի հետ, իսկ Տերն ասաց. «Քեզ համար հոգ չէ», այսինքն՝ դու նախ քո առաքելության արդյունավորման մասին մտածիր, քո անցնելիք ճանապարհի մասին հոգ տար: Մենք էլ ենք այդպիսին. մտածում ենք, թե նա այսպես վարվեց, այնպես վարվեց, սխալ վարվեց եւ այլն, իսկ դատաստանի ժամանակ, երբ Աստված հարցնի՝ ինչո՞ւ արդարությամբ չես գնացել, արդարությամբ չես վարվել քո կյանքի այս շրջանում, մի՞թե պիտի պատասխանենք, թե օրինակ ենք վերցրել մյուսներից, ի վերջո. «Մի դատեք, որ չդատվեք, քանզի ինչ դատաստանով որ դատեք, նույն դատաստանով եւ կդատվեք»,- իր քարոզում նշեց հայր սուրբը:

Փորձենք անցնել կատարելության ճանապարհը, արժանի լինենք Տիրոջ պատկերին ու նմանությանը, չէ՞ որ անսահման բարի ու գթառատ Տերը պատրաստ է ներելու, ինչպես որ ներեց խաչի վրա ապաշխարող ավազակին, քանզի Նա չի ցանկանում մեղավորի մահը, այլ՝ դարձը չար ճանապարհից եւ փրկությունը:

«...Դուք եք երկրի աղը: Սակայն եթե աղը անհամանա, ինչո՞վ պիտի աղվի այն. արդեն ոչ մի բանի պիտանի չի լինի, այլ դուրս թափվելու եւ մարդկանց ոտքի կոխան լինելու: Դուք եք աշխարհի լույսը: Մի քաղաք, որ լեռան վրա է կանգնած, չի կարող թաքնվել: Եվ ճրագը չեն վառում ու գրվանի տակ դնում, այլ՝ աշտանակի վրա, եւ նա լույս է տալիս բոլոր նրանց, որ տան մեջ են: Թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերն ու փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մատթ. Ե 14-16):

Ուրեմն, ուրիշներին չդատելով, քննենք ինքներս մեզ, խոստովանենք մեր մեղքերը, փորձենք ապրել աստվածահաճո կյանքով՝ սիրելով ու բարիք գործելով ուրիշների համար, այդժամ ճշմարտապես կզգանք Տիրոջ ներկայությունը մեր մեջ, քանզի «Աստծու արքայությունը դրսից տեսանելի կերպով չի գալիս, եւ չեն ասի, թե՝ ահավասիկ այստեղ է կամ այնտեղ, որովհետեւ ահա Աստծու արքայությունը ներսում, ձեր մեջ է» (Ղուկ. ԺԷ 21-22):

«Եկեղեցուն մոտ լինելը, ուխտագնացություններին ու տարբեր միջոցառումներին մասնակցելն ինձ օգնեց հետադարձ հայացք նետելու անցած կյանքիս, հասկանալու, գիտակցելու իմ սխալներն ու մեղքերը, ապաշխարելու եւ մտածելու ոչ թե աշխարհիկ հոգսերի, այլ հոգեւոր փրկության մասին»,- ասում է Վահանը՝ Քարոզչական կենտրոնի երիտասարդ անդամներից մեկը:

Ուխտավորները ջերմ հանդիպում ունեցան Աբովյանի երիտասարդների հետ, իսկ Սբ Ստեփանոս եկեղեցու հոգեւոր հովիվ Մաշտոց քահանա Բաբայանն իր խոսքում նշեց, թե իրապես այդ հանդիպումը կարեւոր քայլ էր՝ համախմբելու եկեղեցասեր երիտասարդներին, առաջնորդելու, օգնելու եւ սատարելու նրանց:

*Մարիամ ԱՎԵՏԻՍՅԱՆ*

## Համագործակցություն Գեւորգյան հոգեւոր ճեմարանի եւ Երեւանի պետական համալսարանի ուսանողների միջեւ

Մարտի 16-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Գեւորգյան հոգեւոր ճեմարանում տեղի ունեցավ հանդիպում Երեւանի պետական համալսարանի ֆակուլտետների Ուսանողական գիտական ընկերության նախագահների եւ ճեմարանի ուսանողների միջեւ՝ նախագահությամբ ճեմարանի փոխտեսուչ Վաչե աբեղա Մկրտչյանի եւ բուհերի հոգեւոր պատասխանատու Գեղամ սրկ. Ավետիսյանի:

Հանդիպման ընթացքում երկու կրթական հաստատությունների ուսանողները քննարկեցին համագործակցության մի շարք ծրագրեր: Պայմանավորվածություն ձեռք բերվեց կազմակերպել հոգեւոր-ազգային կյանքի խնդիրներին վերաբերող բանավեճեր ու գիտաժողովներ, ինտելեկտուալ խաղեր եւ մրցույթներ: Բուհերի ուսանողները պարբերաբար կայցելեն նաեւ մանկատներ եւ ծերանոցներ, կմասնակցեն ուխտագնացությունների:

## Կարգալույծ է հռչակվել Տ. Նախապետ քահանա Խաչատրյանը

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ կարգալույծ է հռչակվել Նախապետ քհն. Խաչատրյանը՝ հովվական իր ծառայությունը լքելու եւ եկեղեցական ասպարեզից ինքնակամ հրաժարվելու համար:

Կարգալույծ հռչակված եկեղեցականն այսուհետ կդասվի աշխարհականների շարքը՝ Հովհաննես Խաչատրյան ավազանի անունով:

## Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Քարոզչական կենտրոնի մեկ ամյակը

Մարտի 25-ին Մայր Աթոռ Սբ Էջմիածնում, հանդիսապետությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ հանդիսություն՝ Մայր Աթոռ Սբ Էջմիածնի Քարոզչական կենտրոնի գործունեության մեկ ամյակի կապակցությամբ: Ներկա էին Մայր Աթոռի միաբաններ, կենտրոնի անդամները, բազմաթիվ հյուրեր տարբեր կրթական հաստատություններից ու երիտասարդական կազմակերպություններից:

Քարոզչական կենտրոնի պատասխանատու Թովմա աբեղա Խաչատրյանը, համառոտ անդրադառնալով կենտրոնի գործունեությանը եւ նրա շուրջ համախմբված երիտասարդությանը, մասնավորապես ընդգծեց, որ խմբի նպատակն ուղղված է Եկեղեցու առաքելության արդյունավորմանը:

Հանդիսությանը երաժշտական համարներով ու անհատական ասմունքով հանդես եկան կենտրոնի անդամները, որից հետո մի շարք երիտասարդներ նվերների արժանացան Վեհափառ Հայրապետի կողմից՝ ակտիվ գործունեություն ծավալելու համար: Ներկաները դիտեցին նաեւ կենտրոնի գործունեության մասին պատմող տեսաֆիլմ:

Անգլիայի հայոց թեմի առաջնորդ Վահան եպս Հովհաննիսյանը եւ Անգլիկան Եկեղեցու ներկայացուցիչ, Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիների ասոցիացիայի նախագահ Վիլյամ քհն. Թեյլորն իրենց տպավորություններն արտահայտեցին կենտրոնի գործունեության առիթով՝ բարձր գնահատելով երիտասարդների անձնվեր մասնակցությունն ու աջակցությունը Եկեղեցու առաքելությանը:

Ավարտին կենտրոնի անդամներին իր գնահատանքը բերեց Ամենայն Հայոց Հայրապետը: Նորին Սրբությունը նշեց, որ երիտասարդների կողմից կատարված աշխատանքը մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Ավետարանի պատգամների ու պատվիրանների, Հայոց Եկեղեցու հանդեպ նրանց սիրո վկայությունն է: Վեհափառ Հայրապետը գոհունակություն հայտնեց, որ կենտրոնի մեջ ընդգրկվածները ջանում են տերունական պատգամներին համապատասխան ապրել եւ օգտակարություն բերել բոլոր նրանց, ովքեր կարիք ունեն Աստծու խոսքով մխիթարվելու, Քրիստոսի Ավետարանով զորանալու, հույսով ու լավատեսությամբ նայելու իրենց կյանքի ապագա ընթացքին: Նորին Սրբությունը նաեւ իր մասնավոր գնահատանքը բերեց հայր Թովմային՝ խմբի աշխատանքներն արդյունավետ կերպով կազմակերպելու եւ ուղղորդելու համար, ապա հաջողություն մաղթեց կենտրոնի գործունեությանը՝ հայցելով Տիրոջ օրհնությունը, որպեսզի տարեցտարի այս կառույցն առավել հզորանա եւ նորանոր ոլորտներ ընդգրկի իր առաքելության մեջ:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**
**web կայք՝**
**kh-tert.livejournal.com**
**krishayas.wordpress.com**
Ստոր. տպագր.
2.4.2012 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**